# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Լ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (1477) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 24, 2010
VOLUME 30, NO. 27 (1477) SATURDAY, JULY 24, 2010

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԴԱՒՈՒԹՕՂԼՈՒ. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՏՈՒԺԻ, ԵԹԷ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵԿՆԱԾ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՁԵՌՔԸ ՉՍԵՂՄԻ

*Թուրքիայի արտգործնախարար Ահմետ Դաւութօղլուն պատասխանել է «Ազգայնական Շարժում» կուսակցութեան պատգամաւոր Թուրան Ջիրքինի գրաւոր հարցադրմանը՝ անդրադառնալով Հայաստանի հետ յարաբերութիւնների խնդրին:*

*Թրքական Star-ի փոխանցմամբ՝ Դաւութօղլուն, յիշեցնելով Թուրքիայի՝ բոլոր հարեւանների հետ փոխադարձ յարգանքի եւ լաւ հարեւանութեան քաղաքականութիւնը, նշել է, որ այդ հարցում վերջին տարիներին մեծ առաջընթաց կայ, բացառութեամբ Հայաստանի հետ յարաբերութիւններում:*

*«Հայաստանի հետ յարաբերութիւնների կարգաւորման առաջին քայլը հանդիսացաւ արձանագրութիւնների ստորագրումը: Այդ գործընթացի շարունակութիւնը կապուած է Հայաստանի՝ խնդիրները լուծելու կառուցողական կամքի հետ»,-նշել է Դաւութօղլուն:*

*Դաւութօղլուն, հաւատացած լինելով, որ Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնների*

*Շար.ը էջ 18*

## «ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆԸ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆԸ ԿՐՈՒՄ ԵՆ ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻ ԵՒ ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ»

### ՄԱՄԵԴՅԱՐՈՎ. «ՑԱՒՕՔ, ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԸՆԹԱՑ ՉԳՐԱՆՑՈՒԵՑ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*Ղազախստանում կայացած ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհրդի ոչ պաշտօնական գագաթնաժողովում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների պատուիրակութիւնների ղեկավարները՝ Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը, Ֆրանսիայի ԱԳ նախարար Պեռնար Կուշները եւ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ճեյմս Ստեյնբերգը ղարաբաղեան հակամարտութեան վերաբերեալ համատեղ յայտարարութիւն են արել:*

*ՌԴ, Ֆրանսայի պատուիրակութիւնների ղեկավարները եւ ԱՄՆ փոխպետքարտուղարը ԵԱՀԿ ԱԳ նախարարների խորհրդի ոչ պաշտօնական հանդիպման շրջանակում հանդիպել են Ատրպէյճանի արտգործնախարար Էլմար Մամեդիարովի եւ Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդեանի հետ:*

*Համանախագահող երկրների պատուիրակութիւնների ղեկավարները վկայակոչել են Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ նախորդ տարուայ Դեկտեմբերի 1-ի համատեղ յայտարարութիւնը, որն ընդունուել էր Աթէնքում ԵԱՀԿ արտգործնախարարների հանդիպմանը, եւ յիշեցրել են կողմերին*



**Սերգեյ Լավրով, Էլմար Մամեդիարով, Էդվարդ Նալբանդեան, Պեռնար Կուշներ եւ Ճեյմս Ստեյնբերգ**

*Հելսինկեան եզրափակիչ ակտում պարունակող սկզբունքների հիման վրայ ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման հարցում համաձայնութեան գալու վերաբերեալ իրենց ստանձնած պարտաւորութեան մասին, մասնաւորապէս՝ զերծ մնալ ուժի կամ դրա գործադրման սպառնալիքից, ինչպէս նաեւ պետութիւնների տարածքային ամբողջականութիւն, ժողովուրդների իրաւահաւասարութիւն եւ ինքնորոշում:*

*Նրանք հաստատել են, որ 2009թ. Յուլիսի 10-ին իտալական Ակվիլայում Ռուսաստանի, Ֆրանսա-*

*Շար.ը էջ 18*

## ՍԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆԸ ՀԱՆԴԷՍ Է ԵԿԵԼ ԻՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՕԳՏԻՆ



*Յուլիսի 17-ից 18-ին պաշտօնական այցով Իրանի Իսլամական Հանրապետութիւնում գտնուող Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանը հանդիպումներ է ունեցել Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադի, պաշտպանութեան նախարար Ահմադ Վահիդիի, ազգային անվտանգութեան գերագոյն խորհրդի քարտուղար Սայիդ Ջալիլիի եւ արտաքին գործերի նախարար Մանուչեհր Մոթհաքիի հետ:*

*Պաշտպանութեան նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեճադի հետ հանդիպման ընթացքում, մասնաւորապէս, երկուստեք կարեւորուել են հայ-իրանական բարձր մակարդակի յարաբերութիւնները եւ ընդգծուել են դրանց զարգացման լայն հնարաւորութիւնները:*

Tehran Times*-ի փոխանցմամբ,*

*Շար.ը էջ 18*

## ՀԱՅՐ ԱՆՏՈՆ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ



*Անցեալ Հինգշաբթի, Յուլիսի 15ին, Փասատինայի Հնչակեան Կեդրոնն այցելեց Լոս Անճելըսի Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հայր Անտոն Վրդ. Սարոյեան: Նոյն օրը կը վերջանար հայր Անտոնի գաղութէն ներս պաշտօնավարութեան հինգ տարիներու ժամանակաշրջանը, ուստի եղածը հրաժեշտի այցելութիւն մըն էր իր մեկնումի նախօրէին:*

*Սոյն հրաժեշտի հանդիպման Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ Վազգէն Խոտանեան ողջունելով Հայր Անտոնի ներկայութիւնը բարձր գնահատեց անոր մատուցած ծառայութիւնները թէ Կաթողկէ համայնքէն ներս եւ թէ տեղւոյս հայ գաղութի դիմագրաւած կենսական հարցերուն մէջ իր ցուցաբերած դրական կեցուածքին համար: Այս առթիւ խօսք առին նաեւ Տօքթ. Արշակ Գազանճեան, Գաբրիէլ Մոլոյեան եւ Վահէ Աջապահեան: Բոլորն ալ դրուատեցին Հայր Անտոնի*

*Շար.ը էջ 18*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# «ՀԱՅԱՆՊԱՍՏ» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Այստեղ հայերի համար դրական դերակատարում ունեցաւ Իլհամ Ալիեւը», - Երկուշաբթի օրը լրագրողների հետ հանդիպմանը Ալմաթիում ընդունուած յայտարարութիւնը բնութագրելով որպէս հայանպաստ՝ յայտարարեց Գլոբալիզացիայի եւ տարածաշրջանային համագործակցութեան վերլուծական կենտրոնի ղեկավար Ստեփան Գրիգորեանը:

«Ես իրօք շնորհակալ եմ Իլհամ Ալիեւին: Ինքը չափը անցաւ: Եթէ ինքը ռազմատենչ մէկ յայտարարութիւն անէր, այս (Ալմաթիի) յայտարարութիւնը այսպիսին չէր լինի. մի քիչ այն կը տարբերուէր: Բայց ինքը չափը անցաւ: Միայն վերջին մէկ ամսուայ ընթացքում երեք թէ չորս ելոյթների ժամանակ բաւական կոշտ յայտարարութիւններ արեց: Հենց դրա պատճառով էլ համանախագահող երկրների արտգործնախարարները ստիպուած էին այս կէտերը մտցնել՝ որ միայն խաղաղ ճանապարհով կարող է լուծուել, որ զինադադարի ռեժիմը պէտք է ամրագրել»:

«Մինսկի խմբում համանախագահող երկրների պատուիրակութիւնների ղեկավարների յայտարարութեան հիմնական պատգամը Ատրպէյճանի ռազմատենչ նկրտումները զսպելն էր եւ գործընթացը ճիշտ ուղի վերադարձնելը», - «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցում նշեց Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի ղեկավար Թեւան Պօղոսեանը:

«Երբ պետութիւնը հզօրանում է, իրեն թւում է, թէ ինքը արդէն կարող է բոլորի հետ խօսել այլ բառեր օգտագործելով: Ինձ թւում է, նաեւ հենց այդ գաղափարն է, որ բոլոր երկրները ուզում էին ցոյց տալ Ատրպէյճանին, որ ինչքան էլ դու մի քիչ հզօր ես տարածաշրջանում քո նաւթային տոլարներով, դա չի նշանակում, որ մեր հետ պէտք է այդպէս խօսես», - յաւելեց նա:

«Առաջիկայում ղարաբաղեան ուղղութեամբ յատուկ զարգացումներ ես չեմ տեսնում: Փոխարէնը մեզ լուրջ զարգացումներ են սպասւում Մերձաւոր Արեւելքում՝ Թուրքիայի, Իրանի, Իսրայէլի շուրջ», - «Ազատութիւն» ռատիոկայանի խնդրանքով հարցի վերաբերեալ իր կանխատեսումները փոխանցեց Լեռնային Ղարաբաղի նախկին արտգործնախարար Արման Մելիքեանը:

«Ղարաբաղի գործընթացը պայմանաւորուած կը լինի Մերձաւորարեւելեան գործընթացի զարգացումներով: Եւ այս առումով ցանկացած շարունակութիւն հնարաւոր է: Յատկապէս՝ Հայաստանի դիւանագիտական, քաղաքական պասսիւութեան պայմաններում», - եզրափակեց Մելիքեանը:

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» ՌԱՏԻՈԿԱՅԱՆ

# ԻՍԿ Ո՞ՐՆ Է ՃԻՇՏԸ

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Արդէն կարծես թէ սովորական է դարձել Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի շրջանակում հնչող յայտարարութիւնների յաջորդականութիւնը. նախ Ատրպէյճանի պաշտօնեաները յայտարարում են, թէ քննարկւում է, ասենք այսքան տարածքի, կամ այս ու այս տարածքների վերադարձի հարցը, կամ քննարկուելու են այդ հարցերն այստեղ-այնտեղ սպասուող հերթական հանդիպումների ընթացքում, իսկ յետոյ Հայաստանի իշխանութիւնը յայտարարում է, թէ դա սուտ է:

Իսկ որն է ճիշտը, ինչն է ճիշտը, ինչ է քննարկւում բանակցային գործընթացում, ինչ ծաւալով, ինչ շրջանակում, այդպէս էլ մնում է անորոշ: Լաւ է, թէ վատ այդ անորոշութիւնը: Դժուար է ասել: Գուցէ լաւ է, որովհետեւ եթէ հասարակութիւնները տեղեակ լինեն բանակցային գործընթացի իրական բովանդակութիւնից, կարող է շատ աւելի դժուար լինեն բանակցային իմիտացիայի շարունակութիւնն ու խաղաղութեան ապահովումը:

Բայց արդեօք իմիտացիան իրական է: Այսինքն, արդեօք խնդիրն իսկապէս իմիտացիան է, թէ ոչ մի իմիտացիա էլ չկայ, կան կոնկրետ քննարկումներ եւ առարկայական բանակցութիւններ: Դա էլ անորոշ է: Որեւէ մէկը չի կարող ստոյգ ասել՝ տեղի է ունենում իմիտացիա, թէ միջնորդները լրջօրէն աշխատում են օր առաջ կամ ժամ առաջ կողմերին որեւէ տարբերակի շուրջ համաձայնութեան բերելու վրայ:

Բայց, թէ մէկ, թէ միւս դէպքում Հայաստանի իշխանութեան պահուածքը տարօրինակ է: Տարօրինակ է այն առումով, որ Հայաստանի իշխանութիւնը որդեգրել է Ատրպէյճանին հերքողի մարտավարութիւն: Այսինքն, Ատրպէյճանը ինչ որ բան է ասում, այստեղից ասում են սուտ է: Գոնէ մի բան էլ Հայաստանը ասեր: Օրինակ, Հայաստանն էլ գոնէ մի անգամ յայտարարեր, որ ասենք այսինչ քաղաքում սպասուող բանակցութեանը կողմերը քննարկելու են Ղարաբաղի անկախութեան ճանաչման ժամկէտների հարցը: Ենթադրենք: Կամ նման մի բան: Թող մի անգամ էլ Ատրպէյճանը ստիպուած լինէր յայտարարելու, թէ դա սուտ է:

Գուցէ Հայաստանի իշխանութիւնը չի փորձում բանակցային գործընթացի մասին որեւէ կեղծ տեղեկութիւն հրապարակել: Բայց Հայաստանի իշխանութեան հենց այդ անկեղծութիւնն է, որ տարօրինակ է թւում: Տարօրինակ է թւում թէկուզ այն պարզ պատճառով, որ օրինակ ներքին կեանքի վերաբերեալ հարցերում Հայաստանի իշխանութիւնն այդքան էլ անկեղծ չէ, անկեղծութիւնն այդքան էլ բնորոշ չէ ներքին կեանքի գործելաոճին: Ինչու ներքին կեանքում իշխանութիւնը բաւական թեթեւութեամբ հրապարակ է նետում մեծ քանակի կեղծ տեղեկատւութիւն, տարբեր բնագաւառներում վարդագոյն ներկայի եւ պայծառ ապագայի մասին, իսկ ահա Ղարաբաղի հարցում խուսափում է այդ բանն անելուց:

Անշուշտ, կայ այն պահը, որ կեղծիքը յուսահատութեան դրսեւորում է: Այսինքն, գուցէ Ատրպէյճանը բանակցային գործընթացում յուսահատութիւնից է անցել բովանդակային կեղծ տեղեկատւութիւն հրապարակելուն, ինչպէս որ Հայաստանի իշխանութիւնն էլ ներքին կեանքում է անելանելիութիւնից դիմում կեղծ տեղեկատւութիւնների տարածմանը: Բայց առաւել եւս հետաքրքիր է, որ եթէ բանակցային իրական պատկերը Հայաստանի համար նպաստաւոր է, ինչու այդ մասին գոնէ ինչ որ չափով չմանրամասնել սեփական հասարակութեանը: Թող հասարակութիւնը լսի ու ոգեւորուի, թէ որքան լաւ է բանակցում իշխանութիւնը:

Այլապէս ստացւում է, որ Հայաստանը Ղարաբաղի հարցում վերածուել է ընդամէնը «սուտ դետեկտորի», որ մասնակցում է «յանցագործութեան բացահայտմանը», բայց ընդամէնը որպէս գործիք, ոչ թէ գործող:

«ԼՐԱԳԻՐ»

# ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ

Ռուսաստանի եւ Ֆրանսայի պատուիրակութիւնների ղեկավարներն ու ԱՄՆ պետքարտուղարի տեղակալը հանդիպել են Ատրպէյճանի արտգործնախարար Էլմար Մամեդիարովի եւ Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի հետ՝ Ղազախստանի Ալմաթի քաղաքում ընթացող ԵԱՀԿ ԱԳՆԽ շրջանակներում:

Համանախագահող երկրների պատուիրակութիւնների ղեկավարները յիշեցրել են 2009թ. Դեկտեմբերի 1-ի Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ յայտարարութիւնը՝ ընդունուած ԵԱՀԿ արտգործնախարարների՝ Աթէնքում կայացած հանդիպմանը, եւ կողմերին յիշեցրել են ղարաբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորմանը հասնելու իրենց պարտաւորութեան մասին՝ Հելսինկեան եզրափակիչ ակտում պարունակուող սկզբունքների հիման վրայ, մասնաւորապէս՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման, պետութիւնների տարածքային ամբողջականութեան, նաեւ ժողովուրդների իրաւահաւասարութեան եւ ինքնորոշման սկզբունքների:

Նրանք հաստատել են, որ Ռուսաստանի, Ֆրանսայի եւ ԱՄՆ-ի նախագահներ Տմիտրի Մեդվեդեւի, Նիքոլա Սարքոզիի եւ Պարաք Օպամայի կողմից 2009թ. Յուլիսի 10-ին իտալական Աքվիլայում ձեւակերպուած եւ այս տարուայ Յունիսի 26-ին Մասկոկում կրկնած տարրերը պէտք է հակամարտութեան ցանկացած արդար եւ ամուր կարգաւորման հիմք լինեն: Ենթադրեալ տարրերը մէկ ընդհանրութիւն են, դրանցից մի քանիսը հանելու փորձերը անհնարին կը դարձնեն հաւասարակշռուած լուծման ձեռքբերումը:

Ֆրանսայի արտգործնախարար Պեռնար Քուշներն ու ԱՄՆ փոխպետքարտուղար Ճեյմս Սթայնբերգը երախտագիտութիւնն են յայտնել նախագահ Մեդվեդեւի եւ նախարար Լավրովի՝ կողմերի միջեւ տարաձայնութիւնները յաղթահարելու փորձերը, ի գիտութիւն ընդունելով այս տարուայ Յունուարի 25-ին Սոչիում եւ Յունիսի 17-ին Սանկտ-Պետերբուրգում քննարկուած դրոյթները:

Ֆրանսայի, Ռուսաստանի եւ Միացեալ Նահանգների պատուիրակութիւնների ղեկավարներն ընդգծել են, որ հակամարտութեան կողմերի ձեռնարկած ջանքերն անբաւարար են՝ զգալի տարաձայնութիւնների յաղթահարման ուղղութեամբ: Նրանք ափսոսանք յայտնեցին վերջերս տեղի ունեցած իրադարձութիւնների, այդ թւում՝ Յունիսի 18-19-ի զինուած միջադէպի եւ հրապարակային զգացմունքային յայտարարութիւնների կապակցութեամբ: Նրանք նախազգուշացրել են ներկայիս իրավիճակի պատճառ ուժի կիրառումից եւ դրա կրկնութիւնից, որ կարող է հանգեցնել միայն տառապանքների, աւերածութիւնների, իսկ հակամարտութիւնն ու թշնամութիւնը ժառանգութիւն կը մնան ապագայ սերունդներին:

Նրանք յամառօրէն կոչ են արել ամրապնդել փոխզիջման ոգին բանակցութիւնների շարունակման համար՝ ընդհանուր հիմունքների վրայ համաձայնութեան հասնելու նպատակով: Կողմերին լրացուցիչ միջոցներն անհրաժեշտ են 1994թ. հրադադարի ռեժիմի ամրապնդման եւ յետագայ քաղաքական երկխօսութեան ու պայմանաւորուածութիւնների ձեռքբերման առաւել բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով:

Համանախագահող երկրների պատուիրակութիւնների ղեկավարները հաւաստել են կողմերին աջակցելու իրենց հաւատարմութիւնը՝ խաղաղ համաձայնութեան հասնելու համար, սակայն ընդգծել են, թէ ղարաբաղեան հակամարտութեան դադարեցման գլխաւոր պատասխանատուութիւնն ընկած է Ատրպէյճանի եւ Հայաստանի առաջնորդների ուսերին»:

NEWS. am

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ. «ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ԲԱՆԱԼԻՆ ԳՏՆՒՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՁԵՌՔՈՒՄ»

### ՀՀՇ-Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒԵՑ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ




*Առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան ելոյթի պահուն ՀՀՇ համագումարին*

*Անցեալ Շաբաթ օրը Կառավարութեան նիստերի դահլիճում մեկնարկեց Հայոց Համազգային Շարժման հերթական համագումարը: Հայ Ազգային Գոնկրեսի առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, ով համագումարի պատուիրակների թւում է, իր ելոյթում ներկաներից շատերի համար անսպասելիօրէն անդրադարձաւ վերջին շրջանում կուսակցութեան ներսում տեղի ունեցող խմորումներին:*

*«Վերջին շրջանում Հայաստանի իշխանութիւնները փորձել են ազդեցութիւն գործել ՀՀՇ-ի ներսում եւ ճեղքուածք առաջացնել կուսակցութեան եւ Հայ Ազգային Գոնկրեսի միջեւ: Սակայն ՀՀՇ վարչութեան եւ խորհրդի անդամների մեծամասնութեան զգօնութեան շնորհիւ վնասարարութիւնը ժամանակին բացայայտուել է, եւ Գոնկրեսի պառակտման վտանգն ի սպառ չեզոքացուել», - ասաց Տէր-Պետրոսեանը:*

*«Ժամանակն է, որպէսզի Հայաստանի իշխանութիւններն ու արտաքին ուժերը գիտակցեն, որ Հայ Ազգային Կոնգրեսը հանրապետութեան քաղաքական կեանքում անփոխարինելի դերակատարութիւն ունեցող մշտական գործօն է, որ որեւէ միջոցով հնարաւոր չէ քայքայել կամ վերացնել: Մենք դիմացանք գնդակոծութեան, բանտերի, ոստիկանական ու հարկային տեռորի, կը դիմանանք նաեւ նման ճղճիմ վնասարարութիւնների: Այս համագումարից յետոյ, մենք, վստահաբար, կարողանալու ենք յայտարարել, որ ՀՀՇ-ի եւ Գոնկրեսի համագործակցութիւնն անսասան է», - յաւելեց նա:*

*Իր ելոյթում Հայաստանի առաջին նախագահը, նշելով, որ «ՀՀՇ համագումարն ընթանում է Հայաստանում ստեղծուած ներքին թէ արտաքին գերզգայուն իրավիճակում եւ երկրի առջեւ ծառացած լրջագոյն մարտահրաւէրների պայմաններում»՝ ասաց. - «Ես չեմ պատրաստւում ո՛չ հանգամանօրէն վերլուծել այդ իրավիճակը, ո՛չ էլ գնահատել իշխանութիւնների կամ ընդդիմութեան՝ դրանից բխող գործողութիւնները, առաւել եւս քննադատել կամ մեղադրել որեւէ մէկին... Գործնական քաղաքականութեան տեսակէտից առաւել կարեւոր է վերհանել ու սառնասրտօրէն արձանագրել այն ելակէտային իրողութիւնները, որոնց հետ պարտաւոր է հաշուի նստել ցանկացած պատասխանատու քաղաքական ուժ՝ լինի իշխանութիւն թէ ընդդիմութիւն: Անտեսել այդ իրողութիւնները եւ առաջնորդուել ցանկալին իրականութիւն համարելու մտածողութեամբ, հաւասարազօր է յանցաւոր միամտութեան կամ քաղաքական մեղսունակութեան: Եթէ որեւէ քաղաքականութիւն հիմնուած չէ իրողութիւնների, այլ կերպ ասած ռեալութիւնների վրայ, ապա դա կարելի է կոչել ամէն ինչ, բացի քաղաքականութիւնից»:*

*Այնուհետեւ Տէր-Պետրոսեանը հանգամանօրէն անդրադարձաւ «Հայաստանի քաղաքական վարքագիծը թելադրող ելակէտային իրողութիւններին»:*

*Խօսելով արտաքին քաղաքական խնդիրների վերաբերեալ՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը յայտարարեց. - «Ղարաբաղեան հակամարտութեան,*



*ՀՀՇ-ի վարչութեան նորընտիր նախագահ Արամ Մանուկեան*

*ինչու չէ, նաեւ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման բանալին գտնւում է Ռուսաստանի ձեռքում: Հետեւաբար, անկախ իր նախապատուութիւններից, Հայաստանի ցանկացած իշխանութիւն կենսական այդ խնդիրների լուծումը պէտք է որոնի տուեալ աշխարհաքաղաքական համատեքստում»:*

*Կուսակցութեան հաշուետուութիւնը ներկայացրեց Արամ Մանուկեանը՝ մասնաւորապէս շեշտելով. - «Կազմակերպութիւնը ամբողջութեամբ պահպանեց իր քաղաքական կորիզը, հաւատարիմ մնաց իր գաղափարախօսութեանը եւ հաւատամքին, պահպանեց իր քաղաքական մարտունակութիւնը»:*

*Համագումարի ընդունած բանաձեւում նշուեց, որ «ՀՀՇ-ն ամբողջութեամբ կարեւորում է մասնակցութիւնը համաժողովրդական շարժմանը եւ անդամակցութիւնը Հայ Ազգային Գոնկրեսին». - «Համագումարը գտնում է, որ Հայ Ազգային Գոնկրեսը այն քաղաքական փորմատն է, որ բռնապետական, ոչ լեգիտիմ իշխանութեան դէմ պայքարը տանում է ամենաարդիւնաւէտ ճանապարհով: Համագումարը յանձնարարում է վարչութեանը, կուսակցութեան բոլոր ստորաբաժանումներին շարունակել եւ ակտիւացնել պայքարը Հայ Ազգային Գոնկրեսի կազմում՝ քաղաքական օրակարգի առաջին խնդիր ունենալով արտահերթ նախագահական ու խորհրդարանական ընտրութիւնների պահանջը»:*

*Համագումարը փոփոխութիւններ մտցրեց ՀՀՇ-ի կանոնադրութեան մէջ, ըստ որի՝ վարչութեան կազմում նախկինում գործող 25-ի փոխարէն ընդգրկուեցին 31 անդամ: Նորընտիր վարչութեան կազմում, ի թիւս այլոց, ընտրուեցին հետախուզման մէջ գտնուող Վանօ Սիրադեղեանը, նախագահական վերջին ընտրութիւնների կապակցութեամբ ազատազրկուած Աշոտ Մանուկեանը, Յարութիւն Ուռուտեանը եւ Արամ Բարեղամեանը:*

*Նորընտիր վարչութեան անդրանիկ նիստում ՀՀՇ-ի վարչութեան նախագահ ընտրուեց Արամ Մանուկեանը:*

# ԻՐԱՒԱՊԱՇՏՊԱՆ ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԻՐԱՌՈՂ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՄԻՆԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆՆ Է»



*Իրաւապաշտպան Արթուր Սաքունց*

*Երեւանում կայացած ասուլիսի ժամանակ Հելսինկեան ասոցիացիայի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը ներկայացրել է «Խոշտանգումները Հայաստանի իրաւապահ համակարգում» այլընտրանքային զեկոյցը: Զեկոյցում նշւում է, որ «ՀՀ-ում ոստիկանութիւնը դարձել է քաղաքացիներին խոշտանգելու, բռնութիւնների ենթարկելու, նուաստացնելու մարմին»: Ըստ Սաքունցի՝ ոստիկանապետ Ալիկ Սարգսեանն ուղղակի պատասխանատուութիւն է կրում ստեղծուած իրավիճակի համար. «Ինքը կամ անկարողունակ է՝ որպէս ղեկավար, կամ գիտակցուած է անօրինականութիւն անում»:*

*Համաձայն զեկոյցի՝ ոստիկանութիւնում դաժան վերաբերմունքի արժանացած մարդիկ 60%-ի դէպքում ոստիկանութիւն են բերուել առանց համապատասխան ծանուցման:*

*Իրաւապաշտպանի ներկայացրած այլընտրանքային զեկոյցում նշուել է, որ 2009-2010 թթ ընթացքում Հելսինկեան ասոցիացիայի Վանաձորի գրասենեակի կողմից գրանցուել է ոստիկանների կողմից քաղաքացիներին ֆիզիքական բռնութիւնների ու հոգեկան ճնշումների ենթարկման մօտ 15 դէպք. դրանցից ոչ մեկի կապակցութեամբ քրէական գործ չի յարուցուել:*

*Սաքունցի խօսքերով, բացի ոստիկանութիւնից, խոշտանգումներն առաւել նկատելի են նաեւ զինուած ուժերում, հոգեբուժարաններում, քրէակատարողական հիմնարկներում, յատուկ դպրոցներում, այսինքն՝ այն հաստատութիւններում, որոնք փակ են:*

*Նշենք, որ այս զեկոյցն ուղղուելու է Խոշտանգումների կանխարգելման կոմիտէին ու շահագրգիռ այլ կազմակերպութիւններին:*

# ՌՈՒԲԷՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ. «ԹՈՂ ՆԱԽԱԳԱՀԸ ՆԱԽ ԻՐ ՏՈՒՆԸ ՄԱՔՐԻ»



*Երգիչ-երգահան Ռուբէն Հախվերդեան*

*«Առհասարակ, երբ դու ինքդ ազնիւ չես քո ժողովրդի նկատմամբ, ինչպէ՞ս կարող ես ազնւութիւն պահանջել քո հարեւանից»,- երգիչ-երգահան Ռուբէն Հախվերդեանի այս խօսքերն ուղղուած են Սերժ Սարգսեանին:*

*Երգահանը կիսում է Ղարաբաղեան իրավիճակի վերաբերեալ Սերժ Սարգսեանի գնահատականները, սակայն. «Շատ կը ցանկանայի, որ մեր նախագահը նախ եւ առաջ իր տունը մաքրեր ու նոր միայն դրանից յետոյ իրաւունք ունենար թուրքերի մասին խօսել»:*

*Ապա պարզաբանեց. «Ես նկատի ունեմ՝ Մարտի 1-ը, մեր քաղբանտարկեալները, որոնք այսօր բանտում են»:*

*Հայ-թրքական յարաբերութիւնների ներկայ գործընթացը, ըստ նրա, մեր լրատուամիջոցներով այնքան էլ թափանցիկ չի ներկայացվում. «Մեր լրատուամիջոցները հիմնականում խօսում են հետեւանքների, այլ ոչ թէ պատճառների մասին, արմատից չեն վերցնում հարցը: Օրինակ՝ երբ Սերժ Սարգսեանն ասում է՝ մենք պէտք է սպիտակ թղթից սկսենք, արդեօք դա նշանակո՞ւմ է, որ նա ինքն իրենից պէտք է սկսի»:*

*Ի դէպ, Ռուբէն Հախվերտեանը վստահեցրեց, որ ինքը քաղաքական որեւէ շրջանակի քծնելու կամ դուր գալու խնդիր չունի, քանի որ իր համար բոլոր «չակերտաւոր կուսակցութիւնները կլանների վերածուած բաներ են»: Միակ կուսակցութիւնը, որի գաղափարախօսութեանը նա հաւատում է, ՀՅԴ-ն է, թէեւ նրա՝ վերջին տարիների շատ քայլերից Ռուբէն Հախվերտեանը ոգեւորուած չէ:*

# ԼՈՒՐԵՐ

## ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ ԱՆՔԱՐԱՆ ՊԱՏՐՈՒԱԿ Է ՓՆՏՌՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԸ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Թուրքիան պատրուակ է փնտռում Հայաստանի հետ սահմանը բացելու համար, իսկ տուեալ դէպքում այդ պատրուակը ՆԱՏՕ-ի՝ Սեպտեմբերի 11-17-ը Հայաստանում անցկացուելիք զօրավարժանքներն են: Այս մասին գրում է թրքական Yeni chag («Ենի Ջաղ») պարբերականը՝ քննադատելով Թուրքիայի արտգործնախարար Ահմետ Դաւութօղլուի որդեգրած քաղաքական ուղեգիծը եւ այն որակելով որպէս «ձախողուած արտաքին քաղաքականութիւն»:*

*«Արտգործնախարար Ահմեթ Դաւութօղլուն Հայաստանի, Իսրայէլի եւ Իրանի առնչութեամբ սկզբում յայտարարում էր, թէ «սկզբունքներ ունենք», սակայն շատ չանցած մէկը միւսի ետեւից իջեցրեց առագաստները: Հայաստանի հետ ստորագրուած Արձանագրութիւնները կեանքի կոչելու համար որպէս նախապայման առաջ էր քաշում ղարաբաղեան հիմնախնդիրը, իսկ այն բանից յետոյ, երբ ԱՄՆ պետքարտուղար Հիլլըրի Քլինթընից ստացաւ «Գնդակը Թուրքիայի կիսադաշտում է» մեսիջը, սկսեց ակտիւ աշխատանքներ իրականացնել Հայաստանի հետ սահմանը բացելու ուղղութեամբ: Եւ այսօր Կարսի սահմանը բացելու համար պատրուակ է բերում ՆԱՏՕ-ի զօրավարժութիւնը»,- գրում է թրքական պարբերականը՝ աւելացնելով, որ Թուրքիան հետքայլ է արել նաեւ Իսրայէլի եւ Իրանի հարցերում:*

*«Իրանի հետ միջուկային վառելիքի փոխանակման մասին համաձայնագրի ստորագրման հարցում ակտիւ միջնորդական առաքելութիւն ստանձնած Դաւութօղլուն լիովին աջակցում էր Թեհրանին էի դէմ հանդէս եկաւ ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդում Իրանի դէմ պատժամիջոցներ կիրառելու բանաձեւի ընդունմանը: Սակայն օրեր առաջ Միացեալ Նահանգների պետքարտուղար Հիլլըրի Քլինթընի հետ հեռախօսազրոյցում Դաւութօղլուն ստացաւ «խաղից դուրս արի» մեսիջը: Իսկ աւելի ուշ Radikal օրաթերթի հետ զրոյցում յայտարարեց, որ Թուրքիան հետեւելու է ՄԱԿ-ի՝ Իրանի դէմ ընդունուած պատժամիջոցներին»,- գրում է Yeni Chag-ը:*

*«Իսկ ինչ վերաբերում է Իսրայէլի կողմից «Մաւի Մարմարա» նաւի վրայ իրականացուած յարձակմանը, որի հետեւանքով զոհուել էր 9 թուրք, Դաւութօղլուն նախ հանդէս եկաւ կոշտ քննադատութեամբ՝ յայտարարելով, որ եթէ Թել Աւիվը ներողութիւն չխնդրի, ապա նրա հետ յարաբերութիւնները խզուելու են: Իսկ աւելի ուշ Դաւութօղլուն գաղտնի հանդիպում ունեցաւ Իսրայէլի արդիւնաբերութեան, առեւտրի եւ զբաղուածութեան նախարար Բենիամին Բեն Էլիզերի հետ»:*

## ՎԱՆԻ ԱՌԵՒՏՐԱՅԻՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԱԿԱՀԱՅ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

*Թուրքիայի Վանի նահանգի առեւտրա-արդիւնաբերական պալատի նախագահ Ջահիր Քանդաշօղլուն խիստ քննադատութեան է ենթարկել Կարսի նահանգապետ Ահմեդ Քարայի՝ հակահայկական յայտարարութիւնը:*

*Թուրքական Beyazgazete-ի փոխանցմամբ՝ Ջահիր Քանդաշօղլուն յիշեցրել է, որ Թուրքիայի հանրապետութեան ստեղծումից ի վեր, 87 տարի Թուրքիայի արեւելեան շրջանը զարգացուածութեամբ հետ է մնացել: «Մենք առաւօտից երեկոյ աշխատում ենք, որպէսզի զարգացնենք տնտեսութիւնը, աշխատում են օտարերկրեայ կապիտալը ներգրաւել մեր տարածաշրջան, իսկ մեր այս ջանքերին հակառակ, Կարսի նահանգապետը հայկական հարցի հետ կապուած իր յայտարարութեամբ մեզ խոր հիասթափութիւն պատճառեց»-նշել է Ջահիր Քանդաշօղլուն:*

*Վանի առեւտրաարդիւնաբերական պալատի նախագահը իր խօսքում նշել է, թէ իր Երեւան կատարած այցի, թէ Բեռլինում մասնակցած համաժողովի ընթացքում հայաստանցիներից ոչ մէկը Կարսի նահանգապետի նշած պահանջները օրակարգ չի բերել՝ աւելացնելով, թէ Կարսի նահանգապետը չէ, որ պատմաբանի առաքելութիւն պէտք է իրականացնի: «Մեր կարծիքով, Սեպտեմբերի 19-ի Ախթամարի Ս. Խաչ եկեղեցու բացումից առաջ Կարսի նահանգապետի նման յայտարարութիւնը մտածուած է»-աւելացրել է Քանդաշօղլուն:*

*Նա նաեւ նշել է. «Մենք՝ որպէս Վանի առեւտրա-արդիւնաբերական պալատի անդամներ, սխալ ենք համարում Կարսի նահանգապետ Ահմեդ Քարայի՝, Հայերն են մեզ կոտորել, ոչ թէ մենք՝ նրանց» արտայայտութիւնը, եւ սխալ ենք համարում նահանգապետի՝ նման քննարկումների մէջ մտնելը: Մենք այս պահին մեր ամբողջ էներգիան պէտք է ծախսենք Հայաստանի հետ սահմանների բացմանը, հարեւանների հետ արտահանման եւ ներմուծման կազմակերպմանը, եւ տարածաշրջանի բարգաւաճման ապահովմանը: Եւ Կարսի նահանգապետից այս համատեքստում ենք աջակցութիւն սպասում»-ամփոփել է իր խօսքը Ջահիր Քանդաշօղլուն:*

*Նշենք, որ մեկ ամիս առաջ Վանի առեւտրա-արդիւնաբերական պալատի 40 անդամներ այցելել էին Երեւան, որ ընթացքում մասնակցել են Երեւանում կազմակերպուած միջազգային տուրիզմի ցուցահանդէսի, եւ Երեւանի առեւտրա-արդիւնաբերական պալատի հետ կնքել համագործակցութեան յուշագիր:*

Հայ news am

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՍՏԱՄՊՈՒԼԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ



**Թուրքիայի փոխվարչապետ Բիւլենթ Առընչ**

*Թուրքիայի փոխվարչապետ Բիւլենթ Առընչը Յուլիսի 19-ին այցելել է Պոլսոյ Հայոց Պատրիարքարան եւ հանդիպել նորընտիր փոխպատրիարքի հետ:*

*Թուրքիայի փոխվարչապետին Հայոց պատրիարքարանի մուտքի մօտ դիմաւորել է նորընտիր փոխպատրիարք, արքեպիսկոպոս Արամ Աթէշեանը: Հանդիպմանը ներկայ են գտնուել նաեւ Ստամպուլի հայ համայնքի ներկայացուցիչները, ովքեր փոխվարչապետին ներկայացրել են համայնքի խնդիրները:*

*Փոխվարչապետ Առընչը շնորհակալութիւն է յայտնել ջերմ ընդունելութեան համար, եւ նշել, որ անձամբ է ցանկացել այցելել պատրիարքարան՝ շնորհաւորելու արք. Աթէշեանին՝ փոխպատրիարք ընտրուելու կապակցութեամբ: Բիւլենթ Առընչը անդրադարձել է նաեւ Ստամպուլի հայկական Սուրբ Փրկիչ հիւանդանոցի բարձրակարգ սպասարկմանը՝ նշելով, որ հայ համայնքը պէտք է հպարտութիւն զգայ այդ հաստատութեան համար:*

*Արքեպիսկոպոս Աթէշեանը փոխվարչապետին հրաժեշտից առաջ նուիրել է «Օսմանեան շրջանի հայ նկարիչները» լայնածաւալ աշխատութիւնը:*

## ՄԱՀԱՑԵԼ Է ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻՏԻ ԹՈՌԸ



**Օսման Նամի Օսմանօղլու**

*Օսմանեան արիւնարբու սուլթան Աբդուլ Համիդի 92-ամեայ թոռը Ստամպուլի հիւանդանոցներից մէկում իր մահկանացուն է կնքել:*

*Թուրքիայի Մարմարիսի շրջանի Հիսարոնյու գիւղում բնակուող 92-ամեայ Օսման Նամի Օսմանօղլուն Յունիսի 10-ին սրտի անբաւարարութեան ախտանիշով տեղափոխուել էր հիւանդանոց եւ մինչ մահը գտնուել էր բժիշկների խիստ հսկողութեան տակ:*

*Նշենք, որ Աբդուլ Համիդի աղջկայ միջնեկ որդին՝ Օսման Նամի Օսմանօղլուն, ծնուել էր 1918թ.-ին՝ Շուէյցարիայում: Օսմանը բարձրագոյն կրթութիւն է ստացել Ֆրանսայում, երկար ժամանակ ապրել է Լիբանանում եւ Ֆրանսայում, եւ միայն 1975թ.-ին է տեղափոխուել Թուրքիա:*

*Պատմութեան մէջ «արիւնոտ սուլթան» անունը վաստակած Աբդուլ Համիդի օրօք, նոյնիսկ ըստ թուրք պատմաբանների, կոտորուել է 300-400 հազար հայ:*

## ՀԱՅԱԶԳԻ ԹԻԿՆԱՊԱՀԸ ՓՐԿԵԼ Է ՍԱՈՒԴԵԱՆ ԱՐԱԲԻԱՅԻ ԱՐՔԱՅԱԴՍՏԵՐԻ ԿԵԱՆՔԸ



**Արքայադուստր Սառա Ալ-Ամուդի**



**Սարգիս Թոքաթլեան**

*Հայազգի թիկնապահը, վտանգելով սեփական կեանքը, փրկել է Սաուդեան Արաբիայի արքայադուստր Սառա Ալ-Ամուդին նրա նախկին սիրեկանի յարձակումից:*

*Յայտնի շուէտ մոդել Պատրիկ Ռիբսայթերը, որը գովազդում էր Calvin Klein, Armani, Gucci եւ Christian Dior ապրանքանիշերը, որոշ ժամանակ առաջ Թայլանդում անցկացրած հանգստի ընթացքում ծանօթացել է Սառա Ալ-Ամուդիի հետ եւ, հասկանալով, թէ ինչքան հարուստ կարողութեան տէր աղջկայ հետ է շփւում, աշխատել է գրաւել նրա սիրտը: Սակայն արաբ արքայադուստրը որոշ ժամանակ անց Լոնտոնի իր տանը բռնացրել է Պատրիկ Ռիբսեթերին՝ երկու աղջիկների հետ ժամանակ անցկացնելիս, որից յետոյ վէճ է սկսուել: Արաբ արքայադուստրը յայտնել է, որ ինքը խզելու է իր կապը Պատրիկ Ռիբսեթերի հետ, եւ հեռացել ննջարան: Շուէտ մոդելը՝ հասկանալով, որ կորցնում է ահռելի հարստութիւն, մտել է ննջարան, եւ փորձել խեղդել Սառա Ալ-Ամուդիին, սակայն արքայադստերի հայազգի թիկնապահ Սարգիս Թոքաթլեանը հասցրել է փրկել արքայադստերի կեանքը: Այդ ընթացքում Ռիբսայթերը կոտրուած շշով 6 անգամ հարուածել է Թոքաթլեանի դէմքին:*

# ԼՈՒՐԵՐ

## «ՈՍԿԷ ԾԻՐԱՆ»-Ի ԳԼԽԱՒՈՐ ՄՐՑԱՆԱԿԸ ԲԱԺԻՆ ՀԱՍԱՒ ԹՐՔԱԿԱՆ ՖԻԼՄԻՆ




Աւարտուեց «Ոսկէ Ծիրան» 7-րդ երեւանեան միջազգային կինօփառատօնը, որի միջազգային խաղարկային մրցոյթում գլխաւոր մրցանակակիր դարձաւ Թուրք ռեժիսոր Ռեհա Էրդեմի «Կոսմոս» ֆիլմը: Նոյն մրցոյթի 2-րդ մրցանակակիրը Սերգէյ Լոզնիցան է՝ «Իմ Ուրախութիւն» ժապաւէնով:

Միջազգային խաղարկային ժիւրիի անդամ, ամերիկացի ռեժիսոր Ռոբ Նիլսոնը նշեց, որ յաղթող ֆիլմերը ակնյայտօրէն լաւն էին, եւ ժիւրիի համար ընտրութիւնը բարդ չէր:

«Ոսկէ Ծիրան»-ի միջազգային վաւերագրական մրցոյթում առաջին եւ երկրորդ տեղերը նուաճեցին համապատասխանաբար՝ Պաւել Կոստոմարովի «Երկուսով» եւ Վադիմ Ցենդրեյկոյի «Հինգ Փղերով Կինը» ֆիլմերը:

Վաւերագրական ֆիլմերի մրցոյթի ժիւրիի նախագահ, կինոքննադատ Լուչանո Բարիզոնեն նշեց, որ ժիւրին քիչ թէ շատ հետաքրքրութեամբ դիտել է 14 ֆիլմ եւ սեւեռուել երկուսի վրայ: - «Բացի նիւթից, բովանդակութիւնից եւ մատուցման ձեւից, մեր չափանիշներից էր նաեւ զգացմունքը, որ ապրում ես ֆիլմը դիտելիս, երբ քո առջեւ տեսնում ես իրական մարդուն»:

«Հայկական Համայնապատկեր» մրցոյթի ոսկէ ծիրանը նուաճեց երեւանցի ռեժիսորներ Արման Երիցեանի եւ Իննա Սահակեանի «Հայաստանի վերջին լարախաղացը» ֆիլմը: Իսկ նոյն մրցոյթում արծաթէ ծիրանի արժանացաւ Պէյրութում ծնուած ռեժիսոր Կոմս Շահբազեանը՝ «Այստեղ՝ ներքեւում» ֆիլմի համար:

Այս տարի նորոյթ էր Հրանտ Մաթեւոսեանի անուան մրցանակը, որը շնորհուեց «Հայկական Համայնապատկեր»-ում ներկայացուած Մարատ Սարգսեանի «Լեռնաւան» ֆիլմին: Նոյն աշխատանքը արժանացաւ նաեւ Բրիտանական խորհրդի հայաստանեան գրասենեակի սահմանած մրցանակին՝ լաւագոյն կարճամետրաժ ֆիլմ:

7-րդ «Ոսկէ Ծիրան»-ը ամփոփուեց Սերժ Աւետիքեանի՝ Կաննի 2010-ի մրցանակակիր «Շների Կղզի» ֆիլմի ցուցադրութեամբ:

## ԴԱՒԻԹ ԷՆՖԵՆՋԵԱՆ. «ԱՇԽԱՐՀԸ ՆՈՅՆՆ Է, ՄԵՆՔ ԵՆՔ ՇՈՒՌ ԵԿԱԾ»



«Error» ֆիլմի գլխաւոր հերոսը առաւօտեան արթնանում է եւ իրեն յայտնաբերում առաստաղի վրայ. հէնց այդպէս էլ կառուցւում է ֆիլմի սիւժէն: Լրագրողների հետ հանդիպման ժամանակ պատմեց երիտասարդ ռեժիսոր Դաւիթ Էնֆենջեանը:

Տեղեկացնենք, որ Դ. Էնֆենջեանի «Error» ֆիլմը մասնակցում էր «Ոսկէ Ծիրան» միջազգային 7-րդ կինօփառատօնի «Հայկական Համայնապատկեր» մրցութային ծրագրին:

Դաւիթը, մի երկու խօսքով ներկայացրեց իր ֆիլմը. «Այն էքսպերիմենտալ բնոյթ ունի, հետաքրքիր ու նոր ոճի մէջ է: Նշեմ, որ ֆիլմը նկարահանուել է շատ կարճ ժամանակահատուածում»:

Դաւիթը պատմեց, որ իր հերոսը մի օր արթնանում է ու սկսում քայլել առաստաղի վրայ. յետագայ ընթացքը կառուցւում է այս հիմքի վրայ. «Այստեղ ամէն ինչ, ամէնօրեայ շրջապատող ամէն իր առաստաղի վրայ է, շուռ է եկած»: Լրագրողներից մէկի հարցին՝ իսկ ի՞նչն է քեզ համար շուռ եկել, Դաւիթ Էնֆենջեանը պատասխանեց. «Աշխարհը նոյն ձեւն է, ոչինչի էլ շուռ չի եկել. մենք ենք շուռ եկած»:

Երիտասարդ ռեժիսորը նաեւ պատմեց, թէ երբ առաջին անգամ ցանկացել է ֆիլմ նկարել. «Մի օր, երբ Ալբերտ Եաւուրեանի գրասենեակում ես եւ նա մենակ զրուցում էինք, Եաւուրեանը ինձ ցոյց տուեց պատուհանից ընկած լոյսի ու ստուերի խաղը. Այդ պատկերը ոչ մի կերպ նկարագրել չեմ կարող...այդ պահին զգացի, որ պէտք է ֆիլմ նկարեմ»:

Ի դէպ, Դաւիթը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան «Սարգիս Տխրունի» ուսանողական-երիտասարդական միութեան անդամ է, իսկ ֆիլմի աշխատանքների հարցում Դաւիթին օգնել են Հնչակեան Ուսանողական Միութեան իր ընկերները:

## ԲՆԱՊԱՀՊԱՆՆԵՐԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ՝ ՍԵՒԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՀԱՍՆՈՒՄ Է ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՆԻՇԻ



Հայ բնապահպանները վերջերս շարունակաբար իրենց մտահոգութիւններն են յայտնում Սեւանա լճի ճահճացման վերաբերեալ, որի մակարդակը վերջին տարիներին անընդհատ բարձրացել է եւ այժմ հասել է 1901 մեթրի, ինչի հետեւանքով ջրի տակ են մնացել հարիւրաւոր ապօրինի եւ օրինական շինութիւններ, Սեւանի շուրջը տնկուած արհեստական անտառներ, աւտոճանապարհներ, նոյնիսկ գազատար խողովակաշարեր:

Ջրի տակ մնացած կանաչ զանգուածը չի հասցնում արագ քայքայուել եւ, ըստ բնապահպան Կարինէ Դանիէլեանի՝ հնարաւոր է՝ լիճը չհասցնի ինքնամաքրման միջոցով յաղթահարել աղտոտուելու եւ ճահճանալու վտանգը:

2001 թ. ընդունուած «Սեւանա Լճի Մասին» ՀՀ օրէնքով նախատեսւում է մինչեւ 2030 թ. լճի մակարդակը բարձրացնել 6 մեթրով հասցնելով այն 1903.5 մեթրի՝ նախատեսելով տարեկան մօտ 20 սմ բարձրացում: Սակայն 2005 թ.-ից սկսած լճի մակարդակի բարձրացման տեմպերը աւելի բարձր են եղել նախատեսուածից՝ միջինը կազմելով մօտ 37 սմ: Այս տարի Սեւանը բարձրացել է մօտ 60 սմով: Սեւանի մակարդակի բարձրացումը հնարաւոր է դարձել լճից ջրի բացթողնման կտրուկ սահմանափակման շնորհիւ: Բնապահպանութեան նախարարութիւնում կարծում են, որ լճի մակարդակի բարձրացման ներկայիս տեմպերը պահպանելու դէպքում 1903.5 մ ցուցանիշին հնարաւոր կը լինի հասնել արդէն 2020 թ.:

2005-ից մինչեւ 2008 թուականը ՀՀ կառավարութիւնը գումար էր յատկացնում տարեկան մօտ 100 հա ափամերձ տարածք մաքրելու համար: 2009-ին, երբ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը շրջայց կատարեց Սեւանում, յանձնարարեց գումար յատկացնել մօտ 600 հա-ի մաքրման համար՝ տեսնելով, որ 100 հա-ը շատ քիչ է:

Հինգշաբթի ՀՀ կառավարութիւնը որոշում է ընդունել բնապահպանութեան նախարարութեանը յատկացնել 30 մլն դրամ (մօտ 82.800 տոլար)՝ ֆիննական արտադրութեան ջրածածկ եւ ճահճացած տարածքներում աշխատելու համար նախատեսուած յատուկ էքսկավատորի ձեռքբերման եւ տեղափոխման ծախսը ֆինանսաւորելու եւ Սեւանում մաքրման աշխատանքն աւելի արդիւնաւէտ կազմակերպելու նպատակով:

«Նախորդ տարիներին չեն ապահովուել այդ աշխատանքի որակն ու ծաւալը, քանի որ մրցոյթներում յաղթող ճանաչուած ընկերութիւնները չեն ունեցել ստորջրյա անտառածածկ տարածքներում ծառաթփային բոյսերի մաքրման բարձրարտադրողական մեքենա-սարքաւորումներ»,- ասւում է կառավարութեան հաղորդագրութեան մէջ:

ՍԻՐԱՆՈՅՇ ԳԷՈՐԳԵԱՆ
«Արմենիանաու»

## ԱՆՏԻՈՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԼԻՐԻՆ ՎՐԱՅ ՄԶԿԻԹ ԿԱՌՈՒՑՈՒԱԾ Է

Ըստ Թրքական «Սապահ» թերթին, Անտիոքի Սամանդաղ կոչուած շրջանին կից, Եողուն Օլուք գիւղի շուրջ 350 տարեկան հայկական 6 եկեղեցիներէ բաղկացած համալիրին վրայ, «1915-1920-ական թուականներուն գիւղէն հայերու հեռանալէն ետք» բնակութիւն հաստատած Թուրքերուն կողմէ, 1940-ին կառուցուած է մզկիթ մը, որ այժմ կը գործէ իբրեւ աղօթատեղի:

Գիւղացիները պատմած են, որ մզկիթը հայկական եկեղեցւոյ վրայ կառուցելուն պատճառ դարձած է «մզկիթ կառուցելու համար դրամ չունենալը», հետեւաբար, հայկական եկեղեցին մէկ տարի շարունակ օգտագործուած է իբրեւ մզկիթ: Այնուհետեւ, 6 եկեղեցիներու համալիրին վրայ անոնք կառուցած են մզկիթը, որուն տակ գտնուող եկեղեցիները գիւղացիները օգտագործած են իբրեւ խոտի պահեստ, ախոռ եւ պահեստարան:

Գիւղացիները նաեւ յայտնած են, որ «Ուրախ պիտի ըլլան, եթէ եկեղեցին բացուի իբրեւ հայերու աղօթատեղի»: Թրքական թերթը յայտնած է, որ ժամանակին Անտիոք (1940-էն ի վեր՝ Թրքական Հաթա) ժամանած ուխտաւորներու հետ միասին ժամանած է նաեւ Պոլսոյ Հայոց պատրիարքը:

Նշենք, թէ հայկական 6 եկեղեցիներուն գիւղը կը գտնուի Թուրքիոյ մէջ մնացած միակ հայկական Վաքըֆ գիւղի հարեւանութեամբ: Վաքըֆի հայ բնակիչները նոյնպէս ըսած են, թէ Եողուն Օլուքի եկեղեցին պէտք է բացուի արարողութիւններու համար:

# ԱՆՑԵԱԼԸ ՆԵՐԿԱՅԻՆ ՄԷՋ

Ծ. Խ. Պատմութիւնը կը կրկնուի: Բայց միայն անոնց համար, որոնք դասեր չեն քաղեր անկէ: Մարդկային քաղաքակրթութեան պատմութիւնը ցոյց տուած է, որ նիւթը չէ' որ կ'ապահովէ ազգերու գոյերթը, այլ այն հոգեմտաւոր արժէքները, որոնց կը դաւանին ազգերը: Առանց ներքին հզօրութեան, չկայ արտաքին հզօրութիւն:

Կողքի սիւնակներով կու տանք չորս գրութիւններ, որոնք ուսանելի շատ դասեր կը յուշեն մեր ժողովուրդին, մանաւանդ ղեկավար դիրքերու վրայ գտնուողներուն:

## Հոգեւոր Հայաստան

*Մեր երկիրը աւերակների երկիր է, աւերուած մի հայրենիք, որ մենք այսօր կամենում ենք կենդանացնել, որին կամենում ենք նոր կեանքի կոչել:*

*Մեր հոգեւոր հայրենիքը աւերուած մի երկիր է, եւ այդ աւեր ու անաւարտ շէնքերը կանգնեցնելու համար որպիսի՜ ջերմ սէր, որպիսի՜ անձնուիրութիւն, որպիսի՜ բուռն ոգեւորութիւն է հարկաւոր:*

*Քննեցէք ձեր սիրտը եւ նայեցէք, թէ կա՞յ արդեօք այնտեղ հաւատ, որով պիտի կենդանանայ մեր այդ հոգեւոր Հայաստանը. եթէ չկայ, ապա զուր են ձեր ջանքերը նիւթական Հայաստանի համար... Նա չի կենդանանայ, նա հոգով միայն կարող է կենդանի լինել: Դատարկ խօսքեր են մեր փոքր ազգ լինելու մասին հնչող ճառերը. ոչ բելգիացիք են մեծ ազգ, ոչ նորվեգիացիք, մինչդեռ որպիսի՜ դիւթական անուններ են դրանք, որքա՜ն սիրելի ոչ միայն իրենց՝ այդ երկրների զաւակների, այլեւ մեզ եւ ուրիշների համար:*

*Այսօրուայ ահաւոր անցքերը, ինչպէս շատ իրաւացի նկատել էր մի յայտնի ռուս գրող, ոչ միայն աշխարհագրական սահմանագծերը պիտի փոխեն, ազգերի փոխադարձ յարաբերութիւնների մի նոր դասաւորում ստեղծեն, այլեւ գաղափարական աշխարհում պիտի մի նոր յեղաշրջում, մի վճռական փոփոխութիւն առաջացնեն:*

*Եւ յիրաւի: Այսօր մեր առջեւ կատարուող հսկայական անցքերը պիտի անհետ չանցնեն մեր հոգու համար, նրանք իրանց յեղաշրջող ազդեցութիւնը պիտի ունենան:*

*Ես գուշակ լինելու ոչ մի հաւակնութիւն չունեմ: Սակայն ես կ'ուզէի որոշ հետեւողականութիւն գտնել իրերի ընթացքում եւ որոշ տուեալներից անել բոլոր եզրակացութիւնները, որ հնարաւոր է անել:*

*Մեր մեռած կեանքը կարծէք թէ այսօր կենդանութեան նշաններ է ցոյց տալիս: Թող լինեն այդ նշանները տարօրինակ եւ երբեմն այլանդակ, բայց ես կ'ուզէի վերագրել այդ տարօրինակութիւններն ու այլանդակութիւնները անցեալին, կ'ուզէի ենթադրել, որ անցեալի ստուերն է, որ դեռ ընկած է բացուող ապագայի վրայ:*

*Եթէ, իրաւ, այդպէս է, ապա իր աչքերը Հայաստանի դաշտերին ու սարերին յառած հայութիւնը պիտի ներշնչուի մի նոր ու առաւել բարձր տենչանքով, մի պարզ ու խորին գիտակցութեամբ, մի անսասան բաղձանքով, կենդանութիւն ներշնչելու մեր կիսամեռ հոգեւոր հայրենիքին, մեր աւերուող ու անդարձ անհետացող հոգեւոր Հայաստանին: Չէ՞ որ նիւթական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգեւոր կորուստն անդառնալի է:*

*Զպէտք է մատնանիշ անել արտաքին արգելքներն ու խոչընդոտները՝ դրանք միշտ կան եւ դրանց դէմ, այո՜, պէտք է կռուել:*

*Բայց նախ պէտք է ներքին կամք, ներքին հաւատ, անխախտ գիտակցութիւն՝ առանց այդ աւելորդ է եւ արտաքին արգելքների դէմ կռուելը, աւելորդ է այդ պատնէշները ջնջելը, քանի որ, երբ ընկնեն այդ պատնէշները, յանկարծ պիտի տեսնէք դուք, որ զուր էին ձեր ջանքերը, ձեր զոհաբերումները, ձեր կռիւը՝ այդ բոլորը դուք արել էք մի անկենդան դիակի համար:*

*Ահա այսպիսի մի ներքին հաւատ, մի խոր գիտակցութիւն է հարկաւոր հայ մտաւորականութեանը:*

*Հարկաւոր է, եթէ նա իրաւ սիրում է մեր ժողովուրդը, մեր երկիրը:*

*ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ*
*1918*

## Նուարսակի Դաշնագրի Պայմաններ (484թ.)

*ա. Վերացնել կրօնափոխութեան հարկադրանքը. քանդել Հայաստանի մէջ կառուցուած կրակարանները եւ դժուարութիւններ չստեղծել հայկական եկեղեցիի գործունէութեան համար:*

*բ. Պետական պաշտօնեաներուն մեծարել եւ գնահատել արդարամտութեամբ. չցուցաբերել կամայականութիւններ. անազնիւ եւ անվաստակ անձերու, հաւատուրացներու եւ դաւաճաններու փոխարէն պատիւներու արժանացնել ազնիւ, գործունեայ եւ վաստակաւոր մարդոց:*

*գ. Չմիջամտել հայ նախարարներու ներքին գործերուն. չհաւատալ երկերեսանի, բախտախնդիր անձերու ամբաստանութիւններուն. ունկնդրել ուղղամիտ մարդոց խորհուրդները:*

## Ազգին Վիճակը

*...Հօտն անհովիւ՝ մոլոր ու շփոթ, աներեւոյթ եւ անզուսպ ալիքներ յախուռն կը յուզին ի խորս մեր հալածական եւ ողբալի կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղայ, բուժիչ ուժ չկայ: Աւերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մէկ կողմէն, անտարբերութիւն, օտարամոլութիւն ու ցեխոտ սրտեր միւս կողմէն: Փառասիրութիւն, փութկոտութիւն մէկ երեսէն, ապիկարութիւն, տգիտութիւն միւս երեսէն: Իւրաքանչիւր ոք իր պաշտօնն զգեցած է իբր հանդերձ, որ մերկութիւն մնաց ծածկի ի միամիտ աչաց: Մեր մարմինը նեխած է, մեր հոգին ապականած, մեր կեանքը դիակնացած...: Ո՞ւր է մեր խոհական Խորենացին, թող ելլէ՛ արիւնաքամ հողու տակէն եւ ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը: Մեր նախնիք իրենց պաշտօնին փարած էին անձնահեղձութեամբ, իսկ մենք կը յափշտակենք գործն՝ ընչաքաղցութեամբ:*

*Սիրտս փլած է:*

*Կոմիտաս Վարդապետ, 1914*

@@@@@@@

*Ես ձեզ ասում եմ՝ կը գայ Ոգու սով,*
*Եւ դուք կը քաղցէք ճոխ սեղանի մօտ,*
*Կընկնեք մուրալու յարփած ործորով՝*
*Հրեղէն խօսքի, վեհ խօսքի կարօտ:*

*Լրբենի ծաղրով արհամարհեցիք*
*Ոգու վառ գեղմունք – միտք ու երազանք,*
*Նիւթի տաճարում արբած պարեցիք՝*
*Մոռացած անմահ, անհունի տենչանք:*

*Դուք, որ հեգնեցիք ուժն ստեղծագործէ*
*Ձեր նիւթի հանդէպ կը գայ Ոգու սով.*
*Եւ մուրացկի պէս փշրանքի համար*
*Ծարաւ ու նօթի կանցնէք ծովէ ծով...*

*Աւետիք Իսահակեան*
*Պաքու, 1903*


ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐՇ. Տ. ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ԱՋԱՊԱՀԵԱՆ
Կ'ԱՅՑԵԼԷ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Աջապահեան պիտի պատարագէ
եւ քարոզէ Թեմիս հետեւեալ եկեղեցիներուն մէջ
Յուլիս 25ին
Պըրպէնքի Հայց. եկեղեցւոյ մէջ՝
Առաջնորդարան պիտի քարոզէ:
Օգոստոս 1ին
Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ մէջ
պիտի քարոզէ:
Օգոստոս 8ին
Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. եկեղեցւոյ մէջ (ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈԶ)





# ԽՈՒՃԱՊ, ԱՐԽԱՅԻՆՈՒԹԻՒՆ

*ՑԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

*Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացում որեւէ է քիչ թէ շատ նշանակալից, թէկուզ զուտ ֆորմալ տեսանկիւնից նշանակալից իրադարձութիւն Հայաստանի քաղաքական դաշտում բացայայտում է Ղարաբաղի հարցի կապակցութեամբ առկայ խառնաշփոթը:*

*Տեղի ունեցող իրադարձութիւնների արձագանքները վկայում են, որ Հայաստանի քաղաքական դաշտը կամ չի տիրապետում Ղարաբաղի հակամարտութեան գործընթացի առկայ վիճակին ու տրամաբանութեանը, կամ եթէ տիրապետում է, ապա գիտակցաբար մոլորութեան է ենթարկում հասարակութեանը: Եւ որքան էլ տարօրինակ չթուայ, այս պարագայում, Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման կապակցութեամբ, իշխանութեան պահուածքը հասարակութեան հանդէպ շատ աւելի «ազնիւ» է, քան ընդդիմադիր ներկայացող ուժերի: Դա ամենեւին չի նշանակում, որ եթէ իշխանութիւնը յայտարարում է, թէ ամէն ինչ կարգին է, ուրեմն կարգին է, իսկ եթէ ընդդիմադիր ուժերը յայտարարում են, որ ամէն ինչ ձեռքից գնում է, եւ Ղարաբաղը կորցնում ենք, ուրեմն չենք կորցնում:*

*Բանն էլ հենց այն է, որ Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացի վերաբերեալ հանրային ընկալումների ձեւաւորման գործում իշխանութիւնն ու ընդդիմութիւնը կամ ընդդիմութիւնները գործում են նոյն տրամաբանութեան շրջանակում, առաջ բերելով կամ խուճապի, կամ արխայինութեան տրամադրութիւններ: Իշխանութիւնն ասում է՝ արխային եղէք, ամէն ինչ մեր ուզածով է, իսկ ընդդիմութիւններն էլ ասում են, թէ մի քիչ էլ՝ եւ արդէն ամէն ինչ կը վերջանայ: Իսկ ինչու է իշխանութիւնն այս դէպքում աւելի «ազնիւ», քան ընդդիմութիւնները: Որովհետեւ իշխանութիւնն այս պարագայում գործում է իր բնոյթին հաւատարիմ եւ փորձում է անել հնարաւորը, որպէսզի հասարակութիւնը առաւելագոյնս քիչ տիրապետի խնդիրներին: Այդ դէպքում քիչ են լինում նաեւ հանրային պահանջները տուեալ խնդրի հետ կապուած: Դա բոլոր իշխանութիւնների բնոյթն է, պարզապէս կան երկրներ, որտեղ գործում են այդ բնոյթները զսպող արդիւնաւէտ մեխանիզմներ, որոնցից մէկն էլ հենց ընդդիմութիւնն է:*

*Հայաստանում սակայն, ընդդիմութիւնը կամ ընդդիմութիւնները կարծես թէ խաղում են իշխանութեան հենց այդ բնոյթի վրայ, մտնելով անուղղակի, բայց փոխադարձ գործարքի մէջ եւ կարծես թե որդեգրում իշխանութեան այդ նոյն բնոյթը: Բանն այն է, որ երբ իշխանութիւնը յայտարարում է ամէն ինչ կարգին լինելու մասին, իսկ ընդդիմութիւնը կամ ընդդիմութիւններն ամիսը մէկ աղմուկ աղաղակ են անում, թէ հասցրէք վերջին հրաժեշտը տալ Ղարաբաղին կամ տարածքներին, քանի որ խլում են շուտով, եւ երբ այդ ընթացքում ստատուս քուոն շարունակում է պահպանուել, ապա հասարակութիւնը փաստացի տեսնում է, որ գոնէ առայժմ ճիշտն իշխանութիւնն է, որովհետեւ ոչ մի բան էլ չի ծախւում եւ չի խլւում: Բայց ընդդիմութիւնները Ղարաբաղի հարցով հասարակութեանն այլ բան չեն էլ կարող ասել, քանի որ իրենք էլ չգիտեն, թէ ինչ են ուզում ասել, թէ ինչ կանէին, եթէ լինէին իշխանութեան տեղը: Հետեւաբար աւելի շահաւէտ է պարզապէս դառնալ*

*արխայինութեան հակադիր բեւեռն ու հնչեցնել տագնապի կամ խուճապի փող,*

*մինչեւ տեսնենք, թէ ինչ կը լինի: Բայց բնականաբար հարց է առաջանում, թէ իսկ ինչ պիտի անէր ընդդիմութիւնը, որ «ազնիւ» լինէր հասարակութեան հանդէպ աւելի, քան իշխանութիւնը:*

*Նախ, ընդդիմութիւնը պէտք է հասարակական խնդիրների լուծումը չպայմանաւորեր Ղարաբաղի կամ արտաքին որեւէ այլ հարցով: Բացի այդ, ընդդիմութիւնը կամ ընդդիմութիւնները պէտք է ի վերջոյ հասարակութեանը բացատրէին, որ «Ղարաբաղի հարց» ասուածը պէտք է լինի հայոց պետականութեան կամ պետականութիւնների անքակտելի մասն առաջիկայ առնվազն տասնամեակների ընթացքում, եւ այդ հարցը Հայաստանի եւ Ղարաբաղի պետութիւնները պէտք է լուծեն իրենց տարածքում, իրենց պետական որակների բարելաւման միջոցով:*

*Պէտք է թերեւս հասարակութեանը բացատրել, որ Ղարաբաղի հարցը միջազգային քաղաքական օրակարգում մանր ածախ կամ մեծածախ առեւտրի հարց չէ, երբ մեզանից պահանջելու են յանձնել հնարաւորինս ցածր գնով, իսկ մենք էլ պիտի փորձենք հնարաւորինս թանկ գնով հանձնել ինչ որ բան: Հասարակութեանը թերեւս պէտք է բացատրել, որ Ղարաբաղի հարցը Ղարաբաղը տալ-չտալու, կամ տարածք տալ-չտալու հարց չէ միայն եւ դրանով չէ, որ այն լուծուելու է: Հասարակութեանը շատ բան պէտք է բացատրել, բայց արդեօք դա պէտք է որեւէ քաղաքական ուժի: Բացատրել հնարաւոր է այն, ինչ ինքդ պատկերացնում ես: Դա ամենեւին չի նշանակում, որ պատկերացրածն ու բացատրութիւնը կը լինեն բացարձակ ճշմարտութիւն: Բայց բանն այն է, որ դրանք կարող են առաջացնել բանավէճի, քննարկումների դաշտ, որտեղ ի վերջոյ կը ձեւաւորուի Ղարաբաղի հարցի ընկալումների հանրային հայեցակարգ, որից էլ կը ձեւաւորւոի Ղարաբաղի հարցի կապակցութեամբ քաղաքական ուժերին ուղղուող հասարակական պատուէրը: Այսօր այդ պատուէրը գոյութիւն չունի, ու կարծես թէ գոյութիւն չունի նաեւ պատուէր ստանալու ցանկութիւն ունեցող ուժ:*

Կազմակերպութեամբ

ՍԴՀԿ «ՓԱՐԱՄԱԶ» ՄԱՍՆԱՃԻՒՂ-ի

Հրապարակային Քննարկում

«Կովկասեան Կաթսան և Հայաստանը»

Զեկուցողներ՝

Ճօ Քէշիշեան

Գիտաշխատող

Օշին Քէշիշեան

The Armenian Observer Շաբաթաթերթի Հրատարակիչ և Խմբագիր

Համբիկ Սարաֆեան

Քաղաքական մեկնաբան

Համադրող՝

Յարութ Տէր Դաւիթեան

Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, Յուլիս 28, 2010-ին, երեկոյեան ժամը 8ին,
ՀԿԲՄի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ, 1060 North Allen Avenue, Pasadena.

Մուտքը Ազատ

Հիւրասիրութիւն

SDHP "PARAMAZ" CHAPTER PRESENTS

Panel Discussion

"THE CAUCASUS CAULDRON & ARMENIA"

Participating Panelists

Joseph Kechichian, *Adjunct Scholar*
Osheen Keshishian, *Publisher & Editor of The Armenian Observer*
Harry Sarafian, *Political Analyst*

Moderator

Harut Der-Tavitian

Wednesday, July 28, 2010 at 8 pm
AEBU Garo Soghanalian Hall
1060 North Allen Avenue, Pasadena

Free Admission

Refreshments

Ձեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շաբաթաթերթին

## ՎԵՐԱԲԱՑՈՒԵՑ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ




Քանաքեռում Երեքշաբթի օրը հիմնանորոգումից յետոյ հանդիսաւորութեամբ վերաբացուեց Խաչատուր Աբովեանի տուն-թանգարանը:

Թանգարանի ամենահին հատուածում՝ երկու սենեակներից ու թոնրատնից բաղկացած հողաշէն տնակում թխուող տաք լաւաշի բուրմունքը տարածուել էր բարեկարգուած թանգարանի ողջ տարածքում:

Տուն-թանգարանի տնօրէն Յովհաննէս Զատիկեանը լրագրողներին պատմեց, որ իր երկարատեւ ջանքերից յետոյ 5 տարի առաջ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը կառավարութեան պահուստային ֆոնտից յատկացրեց 180 միլիոն դրամ, որով հնարաւոր եղաւ սկսել շատ վատ պայմաններում գտնուող թանգարանի շէնքի վերանորոգումը:




Ընդհանուր առմամբ, հիմնանորոգման վրայ ծախսուել է 250 միլիոն դրամ: Թանգարանին աջակցել են նաեւ Սոցիալական ներդրումների հիմնադրամը, «Վիվա Սել» ընկերութիւնը, Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան մանկավարժական համալսարանը:

«Նորաբաց թանգարանի ցուցադրութիւնը՝ 12 բաժիններով, անթերի վիճակում է, Հայաստանի որեւէ թանգարան չի կարող դրա հետ մրցակցել», եւ հպարտութեամբ յայտարարեց Յովհաննէս Զատիկեանը:

Զատիկեանը փոխանցեց, որ մտադիր են թանգարանում բացել Աբովեանագիտական կենտրոն, եւ այդ գաղափարը արժանացել է կառավարութեան հաւանութեանը. - «Մանկավարժական համալսարանը առաջինը նախաձեռնեց այդ աշխատանքը, եւ երկու աւագ գիտաշխատողի հաստիք է տուել»:

«Ինչու է դա անհրաժեշտութիւն դարձել, որովհետեւ բոլորին համար պարզ է, որ Աբովեան հասկացութիւնը չի ընկալուած կամ չի իւրացուած մեր ժողովրդի կողմից», - յաւելեց Զատիկեանը:

Աբովեանագիտական կենտրոնի անհրաժեշտութիւնը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցներում չեշտեցին ե՛ւ Գրողների Միութեան նախագահ Լեւոն Անանեանը, ե՛ւ Մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեանը:

«Այնքան անելիք ունենք դեռ: Մենք պարտք ունենք Աբովեանին: Վերջապէս մենք կարողանում ենք վերադարձնել մեզ Աբովեանին՝ իր արմատներով, իր ժամանակով, իր շնչառութեամբ», - ասաց Անանեանը:»


ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680


## ԴԱՄԱՍԿՈՍՈՒՄ ԲԱՑՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐԻ ՀԻՒՐՆ Է ԵՂԵԼ ՆԱԵՒ ՍԻՐԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ

Յուլիսի 14-ին բացուել է Դամասկոսի 57-րդ միջազգային արդիւնաբերական ցուցահանդէսը, որին մասնակցում է նաեւ Հայաստանը: Հայկական տաղաւարում ներկայացուած էին հայաստանեան 20-ից աւելի ընկերութիւնների գործունէութիւնը լուսաբանող տեղեկատուական եւ գովազդային նիւթեր: Բացման պաշտօնական արարողութիւնից յետոյ հայկական տաղաւար են այցելել Սիրիայի Արաբական Հանրապետութեան վարչապետ Մուհամմադ Նաջի Օտրին, կառավարութեան անդամներ, դիւանագէտներ, լրագրողներ:

Հայաստանի դեսպան Արշակ Փոլադեանի հետ կարճատեւ զրոյցի ընթացքում Սիրիայի վարչապետը գոհունակութիւն է յայտնել երկարամեայ ընդմիջումից յետոյ ցուցահանդէսին Հայաստանի մասնակցութեան կապակցութեամբ՝ ընդգծելով, որ Հայաստանի մասնակցութիւնը նման լուրջ միջազգային միջոցառումների նոր խթան կը հանդիսանայ հայ-սիրիական առեւտրատնտեսական յարաբերութիւնների զարգացման համար: Զրուցակիցները երկուստեք ընդգծել են հայ-սիրիական տնտեսական համագործակցութեան ակտիւացման անհրաժեշտութիւնը:

Հայկական տաղաւարի այցելուները մեծ հետաքրքրութիւն են ցուցաբերել հայկական արտադրութեան ապրանքների, մասնաւորապէս՝ հանքային ջրերի նկատմամբ:

Ցուցահանդէսին մասնակցում են աւելի քան 50 երկիր Եւրոպայից, Մերձաւոր Արեւելքից, Ասիայից եւ Հարաւային Ամերիկայից:


ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* $50,00 for USA
* $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.
* $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.
Name: ------------------------------------------
Address: ----------------------------------------
City: --------- State:--------- Zip Code:------
Country: -------------
Tel :------------------------ Fax : -------------------------

Ճաշկերոյթ
Պարախնճոյք
եւ Զուարճերոյթ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԷՆՏԷՅԼԻ
ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

Շաբաթ, 31 Յուլիս 2010
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104

Տոմսերու համար դիմել՝
(626) 797-7680

# Massis Weekly

Volume 30, No. 27 Saturday, JULY 24, 2010

*Աշոտեանն, այդ պարոնը լաւ գիտէ, երբ մարդը լիակատար տիրապետում է այս-կամ այն օտար լեզուին, նրա դէմ փակ դուռ չկայ լքելու Հայրենիքը եւ օտար ափերում փնտռել բարեկեցիկ կեանք: Երբ խորը մտածում ենք, վերլուծութիւն կատարում, առերեսւում ենք մի դաժան իրողութեան, որ մեր կառավարութեանը ձգտում է միտումնաւոր, կանխամտածուած արագացնել արտագաղթը ու տարբեր ելքեր է փնտռում, որոնցից մէկն էլ օտարալեզու դպրոցների բացումն է, որն անմիջապէս հարուածում է մատաղ սերնդի ինքնութեան ձեւաւորմանն ու հայեցի մտածողութեան դրսեւորմանը:*

*Լաւ, մի բան չեմ հասկանում. այս մի բուռ ազգը ինչքա՞ն փորձութիւնների միջով պիտի անցնի. Հայի արեական ոգին փորձում են մերել օտար գենի հետ. առանց այդ էլ Ցեղասպանութիւնից յետոյ աշխարհասփիւռ հայութեան սերունդները խօսում են օտար լեզուով, իսկ անկախութիւնից յետոյ ՀՀՇ-ի վարած սխալ քաղաքականութեան շնորհիւ կիսով չափ հայաթափուեց Հայաստանը եւ հիմա սփիւռքում հասակ առած ու ծնուած հայ երեխան դարձեալ օտար լեզուով է խօսում: Մօտաւոր հաշուարկով սփիւռքահայութեան 80-90% -ից աւելին տիրապետում է օտար լեզուին.*

*Պարոն Աշոտեանը գիտի՞, որ հայ երեխաները այստեղ՝ Եւրոպայում բարձրագոյն ուսում առնելով, ոչինչ չգիտեն Հայոց պատմութիւնից, իրենց արմատներից ու նրանց տրամաբանութիւնը նման է եւրոպացու, ոչ՝ հայի: Անգամ հայերէն գրել ու կարդալ չգիտեն: Երբ Հ-1-ով «Հայ ասպետ» հաղորդաշարն է լինում, հայ երեխան կլանուած լսում է ու զարմանում մեր հայ դպրոցականների Հայոց պատմութեան իմացութեան վրայ: Դեռ 2007թուականին ես խնդրանքով դիմեցի Հ1-ի տնօրէն Ա. Յարութիւնեանին, որ հեռուստատեսութեամբ մայրենի լեզուի ուսուցման դասաժամեր յատկացնեն հմուտ մանկավարժների մասնակցութեամբ ու գոնէ շաբաթական երկու օր ու նոյն ժամերի ուսուցանուի հայերէն. սկսած այբուբենից, որ սփիւռքում յայտնուած հայ երեխան գոնէ տառաճանաչ դառնայ, սակայն պատասխան չունեցայ, ես ստիպուած նոյն խնդրանքով դիմեցի Սերժ Սարգսեանին, երբ նա վարչապետ էր, դարձեալ լռութիւն, դիմեցի նախարար Հրանուշ Յակոբեանին, բայց ինչպէս տեսնում էք սայլը տեղից չշարժուեց:*

*Խորը ցաւով եմ գրում, որ մեր մայրենին կամաց-կամաց հոգեվարք*

*Շար.ը էջ 17*

NEW LOOK DENTAL
DIGITAL X-RAY
invisalign Ceritfied
Dental Lab on Premises
Լաբորատորիան Գտնվում է Բուժարանում
GENERAL & COSMETIC DENTISTRY FOR ADULTS & KIDS
Lousine Vahagn Kirakosian, D.D.S. University of Southern California
• TEETH WHITENING
• PERIODONTAL TREATMENT
• PREVENTIVE DENTISTRY
• SURGICAL EXTRACTIONS
• VENEERS, CROWNS
• BRIDGES, FILLINGS
• ROOT CANAL TREATMENT
• REMOVABLE DENTURES (PARTIAL & FULL)
• DENTAL IMPLANTS
• NIGHT GUARDS
• ԱՏԱՄՆԵՐԻ ՃԵՐՄԱԿԵՑՈՒՄ
• ՔԱՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՒ ԼՆԴԵՐԻ ԽՆԱՄՔ
• ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ
• ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ
• ԵՐԵՍԻՉՆԵՐ ( VENEERS ), ՇԱՊԻԿՆԵՐ
• ԿԱՄՈՒՐՋՆԵՐ, ՊԼՈՄԲՆԵՐ ( FILLINGS )
• ԱՏԱՄՆԱՋՂԻ ՀԵՌԱՑՈՒՄ
• ՇԱՐԺԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՇԱՐ ( ՄԱՍՆԱԿԻ ԵՒ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ )
• ԱՏԱՄԻ ՆԵՐՏՈՒՆԿ


818.478.1314
321 E. Alameda Ave. Unit J• Burbank, CA 91502
Fax: 818.842.8331 • Email: info@newlookdentalinc.com
www.newlookdentalinc.com

# ԶԱՆԳԵՐ, ՂՕՂԱՆՋԷՔ, ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ ԶՈՅԳ ԽՏԱՍԱԼԻԿՆԵՐԸ

*ԳՐԻԳՈՐ ՓԻՏԷՃԵԱՆ*
*Երաժշտագէտ*

*Անցեալ ամիս, մեծ ուրախութեամբ ստացայ Մոնթրէալի ծանօթներէս միոյն առաքած «Զանգեր, Ղօղանջէք, Սարդարապատից» զոյգ խտասալիկներու ալպոմը:*

*Հայ ժողովուրդին ու հայրենիքին յաւերժութեանց խորհրդանիշ եղող ձիւնածածկ զոյգ Մասիսներով վեհափառ Արարատին առինքնող լուսանկարովը ծածկուած երկու խտասալիկներ էին անոնք, տեղաւորուած ութը էջանի բացիկ մը բովանդակող տփիկի մը մէջ:*

*Բացիկին առաջին էջը հայ ժողովուրդին ազատ ու անկախ հայրենիք եւ պետականութիւն պարգեւող երեք յաղթական գոյամարտերէն միոյն՝ Սարդարապատի ճակատամարտի պանծալի յաղթանակին նուիրուած, բոլորիս ծանօթ եւ հպարտութիւն պատճառող յուշակոթողին լուսանկարովը զարդարուած է, որուն երկնակամարին վրայ ալ տեղադրուած է «Զանգեր, ղօղանջէք, Սարդարապտից» խտասալիկներուն անունը:*

*Բացիկին երկրորդ եւ երրորդ էջերով կը ծանօթանանք ներկայացուած չափազանց ճոխ յայտագրին, զայն ձայնագրող ընկերութեան եւ դերակատարներու պատկառելի անուանացանկերուն:*

*Չորրորդ եւ հինգերորդ զոյգ էջերուն վրայ, որոնք բացիկին մէջտեղի էջերն են, զետեղուած է գունագեղ եւ փայլփլուն ազգային տարազներով 145 մասնակցողներուն տպաւորիչ խմբանկարը, մէջտեղը ըլլալով տաղանդաւոր երաժիշտ ստեղծագործող, մշակող, նուագահար եւ ղեկավար Գերպ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան:*

*Յաջորդ երկու էջերով տրուած են անուանացանկերը քառաձայն երգչախումբին, համազգայինի «Սանահին» մասնաճիւղի «Անի» (կրտսեր ու երէց) պարախումբերուն, ինչպէս նաեւ բեմայարդարման խումբին, համերգի յատուկ յանձնախումբին, ձայնի եւ լոյսի պատասխանատուին ու օժանդակներու խումբին: Ընդամէնը 131 հոգի:*

*Ափսոս, որ թիւի մեծութեան եւ տեղի սղութեան պատճառաւ կատարողներէն ոչ ոքի անունը պիտի արձանագրեմ գրութեանս մէջ: Այդու ամենայնիւ, առանց տատանելու ըսեմ, որ բոլորը, անխտիր, բարձրագոյն գնահատանքներու արժանի ելոյթ ունեցած են:*

*Բացիկին բովանդակութեանը ծանօթանալէ ետք յուսախաբուեցայ եւ հիասթափուեցայ, քանի որ այս գործը ոչ թէ միայն երգչային-նուագային համերգ մըն էր եղած, այլ առաւել՝ պարային-նուագային, ասմունքային ու երգախառն պատկերներու հարուստ ներկայացումը:*

*Ներկայացուած բազմաբնոյթ եւ բազմաբովանդակ ծրագիրը (երգ, նուագ, պար, ասմունք, պատկեր, դերակատարում եւ խաղարկում): Իր պերճութեամբն ու ճոխութեամբը, անոր լաւագոյն արձանագրութեան կերպը, բեմէն հեռու գործը կարենալ իր ամբողջութեանը մէջ ըմբոշխնելու համար, պէտք է ըլլար տեսասալիկի (DVD) վրայ արձանագրութիւն եւ ոչ՝ խտասալիկի:*

*Դժբախտաբար, խտասալիկի վրայ արձանագրուելով աշխատանքը, որքան որ ալ փորձեմ ամբողջական կերպով ներկայացնել այս հիանալիօրէն իրարու հետ ներհիւսուած չքնաղ գործը, պակասաւոր պիտի ըլլայ, քանի որ զրկուած ենք այնքան կարեւոր եւ լրացուցիչ ապրումներ եւ յոյզեր փոխանցող տեսողական (visual) բաժինէն:*

*Գործին յափշտակիչ ունկնդրութիւնը ազգային ջերմ զգացումներ ու ապրումներ հրահրելէ ու երաժշտական գեղագիտական հարուստ եւ խորունկ վայելքներ շնորհելէ ետք, ամենայն սրտով եւ մեծ ոգեւորութեամբ ու հիացումով կու գամ ըսելու թէ՝ իր բոլոր սահմանափակումներովը հանդերձ, Թորոնթահայ գաղութին համար նման վիթխարածաւալ ձեռնարկի մը այսքան գեղեցիկ իրագործումը ոչ միայն ասմունք է, պար է, թատրեգրութիւն է, այլ ուղղակի՝ երեւոյթ:*

*Այժմ, որ հայր Մեղրիկ Բարիքեանի հրաշագեղ ձեռակերտին ծանօթացայ եւ զայն ունիմ սեղանիս վրայ, կ'ուզեմ հայ հասարակութիւնը եւս անմասն չպահել այս երաժշտախառն թատերերգային գանձէն:*

*Հետեւաբար, այսու, պիտի ջանամ փոքր ի շատէ ներկայցնել զայն:*

*Անկախ իր երկերէն, հայր սուրբը, բոլոր այլ երկերը վերատեսութեան ենթարկած է, վերամշակած է, վերաիմաստաւորած է, յարմարեցուցած է զանոնք key board-ի ծով կարելիութիւններուն, ու իր կնիքով եւ դրոշմով, ինչպէս նաեւ իր իսկ նուագակցութեամբ եւ ղեկավարութեամբ կատարած է զանոնք համաձայն իր գաղափարական-գեղագիտական մտայղացման ու ըմբռնման, աւելի արդիական հնչողութեամբ, աւելի վառ, աշխոյժ եւ կենսունակ մեկնաբանութիւններով:*

*Ուրեմն, key board-ով պահիկ մը փոթորկահունչ ու որոտընդոստ ձայնալիքներով եւ հնչիւններով ստեղծուած մթնոլորտին շնորհած շրջածիրին մէջ ծայր կ'առնէ այն ծրագիրը, որ սկսելով մեր ժողովուրդի պատմութեան «Հայկ եւ Բէլ»ի դիւցազնավէպէն, ապա ներկայացնելով հանգուցային եւ կարեւոր պատմական իրադարձութեանց հանգրուանները, գեղարուեստի այլազան բնագաւառներու զանազան տեսակի զօդումներով եւ զուգակցումներով կատարուած այդ հանգրուանին յատուկ բացատրական ասմունքով եւ անոր համապատասխանող երաժշտական պատկերներով կը հասցնէ զայն մեր օրերուն:*

*Հայր սուրբը իւրաքանչիւր բացատրական-ասմունքին համար, գեղեցիկ երաժշտական ճաշակով մը, որպէս յետնախորք շատ թեթեւ մշակումով մը, գործածած է յեղափոխան Պետրոս Սեմերճեանի յիշատակին նուիրուած այնքան սրտաթով «Վէրքերով Լի» երգին մեղեդին:*

*Ուրեմն, վերը յիշածս մորկային ու ամպրոպային գոռումներէ յետոյ կը սկսի բացատրական-ասմունքը:*

*«Մշուշոտ հողմը չքացաւ յանկարծ եւ արեան շողը ճաճանչեց երկինք:*

*Պարթեւահասակ Հայկը փայլեցաւ դարձեալ ամուր կանգնած բարձրաբերձ ժայռի մը վրայ եւ գոռաց Բէլին անվրդով ու քաջ. Մի ճօճէր նիզակ, մի ճօճէր ընդդէմ իմ ոգիիս ազատատենչ ո՛վ բռնապետ Բէլ, քանզի կը կոտրեմ սուրերդ բոլոր, նիզակներդ թշնամական իմ ազատ կամքիս եւ ժայռակոտ երկրիս միաձոյլ հաւատքով ով բռնապետ Բէլ: Ով բռնակալը բոլոր դարերուն, պարտուած ես դուն սուրիս զօրութեամբ, ազատ եւ անկախ ապրելու կամքիս հզօրութեամբ եւ քարաստան երկրիս պայծառ արեւին լուսեղէն կրակով»:*

*Ու ասկէ յետոյ ամէն նոր հանգրուանին պիտ լսուի «Վէրքերով լի...»ին նուագը, որպէս հայոց պատմութեան ներկայացուող զանազան մասերը իրարու միացնող եւ կապող ոսկեայ օղակ:*

*Հայր Բարիքեան օգտագործելով յայտագրին մէջ գործածուած երգերէն, ինչպէս «Գետաշէն», «Զայն տուր ով ֆէտա» մասնիկներ, թմբկահարումներով եւ փողհատումներով ու այլ նուագարանային ձայներով յօրինած է գեղեցիկ նախամուտք մը, ուր ճարտարութեամբ մը աշխարհիկ երաժշտութեան զուգակցած է կրօնականը, բաժինը պահելով անընդհատ կրկնուող կենսունակ աշխարհիկ նկարագրով կշռոյթի մը վրայ անոր կը զուգակցէ տուտուկի թաւշային ձայնով Մակար Եկմալեանի (1856-1905) Պատարագին «Սուրբ, Սուրբ...»ի այնքան հոգեպարար մայր եղանակը:*

*Ապա, վերադառնալով նուագախմբային աշխարհիկ երաժշտատեսակին, պայծառ ու առոյգ շունչով կատարելէ յետոյ նախերգանքի բաժինը, կը հնչէ այնքան յաջող կերպով կատարուած Արմէն Տիգրանեանի (1879-1950) «Դաւիթ Բէկ» օբերայի Գ. Արարին «Գուսանի Երգ»ն, որուն թեթեւ հիւսուածքի ընկերակցութեամբ սկսող նուագը աստիճանաբար ճոխանալով, զարգանալով եւ ուժեղանալով, հասնելով երգչախումբի մուտքին, ուր բազմաձայնութիւնը կը դառնայ աւելի դաշնեակակերտային (homophonic), խիտ ու պերճահունչ, շնորհիւ հայր սուրբին վարպետ ղեկավարութեան, միայնակ երգեցողութենէն յետոյ յանկարծ երգչախումբը իր «attacca subito»-ով ստեղծած մեծ ընդհարումը հոգեկան ուրախութեամբ պարուրեց զիս:*

*Յաջորդ թիւին չանցած ըսեմ, որ սիրելի հայր սուրբին key board-ի գաղտնիքներուն տիրացած ըլլալը, ինծի համար գեղեցիկ յայտնութիւն մը եղան:*

*Մեղրիկ հայր սուրբը, մեծ վարպետութեամբ ամբողջ համութային նուագախումբի գործիքային պարտականութիւնները փոխադրելով Key board-ի վրայ, բացի յայտագրի միայնակ ջութակէն եւ տուտուկէն, կարողացած է բոլոր նուագարանները լսելի դարձնել իրենց հարազատ հնչեղութիւններով:*

*Մեր ազգային պատմութիւնը չէ կարելի ըմբռնել ու հասկնալ առանց մեր ազգային եկեղեցւոյ, այսինքն Հայց. Առաքելական եկեղեցւոյ պատմութեան՝*

*մեր ազգային մշակոյթը առանց հոգեւոր-կրօնական մշակութային ենթահողին չէ կարելի ամբողջականօրէն իմանալ:*

*Վստահ եմ հայր սուրբը, գիտակ ըլլալով այս իրողութեանց, կրօնական երաժշտութիւնը զօդելով աշխարհիկին հետ կը ներկայացնէ ազգին պատմութիւնն ու մշակոյթը իրենց ամբողջական հասկացողութեամբ: Ահա թէ ինչու պատմութեան այս հանգրուանին համար հետեւեալ բացատրական-ասմունքը պատրաստած է ան:*

*«Կեանքը յաղթեց մահուան: Օծեալ Քրիստոսի մեզ պահապան: Ցնծացէք հայեր, ցնծացէք ընդմիշտ Յիսուսի արեամբ ենք մեր փառաւորեալ»:*

*Պատրաստելէ յետոյ կրօնաշունչ նուագի ներածականով մը շիտակ մթնոլորտն ու ունկնդրին հոգեվիճակը, հայր սուրբը կը ստեղծէ ճիշդ տրամադրութեամբ ու ապրումով ունկնդրելու մեծ ժողովրդականութիւն վայելող Սուրբ Աստուածածնայ նուիրուած «Խնկի Ծառին Նման ես» միջնադարեան սրտայոյզ տաղը:*

*Այս տաղին նշանակումը ուշադրութեան արժանի կերպ մը ունի, որ պարզագոյնէն սկսելով երգի բնագրային տուներու թիւերուն համաձայն, դաշնաւորումը աստիճանաբար զարգանալով, տուները իրարմէ տարբեր գունաւորումներ ստացած եւ տարբեր հնչերանգներով կը լսուին: Այսպէս, այս տաղին արդէն իսկ բ. տունը ա'էն տարբեր ձեւով, զանգերով կը սկսի: Գ. տունը նուագի ձայնաւութեամբ (դէմ բռնելով) հոգեթով զուգերգի է վերածուած դ. տան դաշնաւորումը այլ կերպով զարգացած է: Եւ վերջապէս, երկին համընթաց կշռութային զարկերով տաղին խաղաղական եւ բարեպաշտական բնոյթը ընդգծուած է:*

*Ասմունք. «Արեւելքէն արեւմուտք եւ հիւսիսէն հարաւ եղբայր ենք մենք: Հոգեւորին յաղթութիւնն ենք աներկբայ: Հաւատք ու հուր ենք ընդդէմ գեհենին եւ յաւիտենութիւնն ենք Քրիստոսատեղծ մեր նոր կրօնքով գեղազարդեալ»:*

*Ամպրոպային ու փոթորկային յաղթաշունչ նուագով մը հայր Բարիքեան կը պատրաստէ ունկնդրողը լսելու սովորականէն շատ աւելի բարձր ու վսեմ երաժշտութիւն մը՝ Սահակ Ձորափորեցի հայրապետին (7րդ դար) յօրինած պայծառատիպ «Էջմիածինն ի Հօրէ...» շարականը թարմաշունչ դաշնաւորմամբ, նմանապէս փոթորկող յոյզերով առլցուած, որ թնթիւնային ուժնգութեամբ եւ փայլուն ու ազդեցիկ մեկնաբանական կատարումով, համոզիչ հաստատամտութեամբ կու գայ յայտարարելու Աստուծոյ Միածին Որդւոյն Հայաստան աշխարհ էջքն ու Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին առաջնորդելու իր իսկ Տան՝ Ս. Էջմիածինի կառուցման վայրին եւ կերպին:*

Էջմիածին ի հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա, ձայնք հնչեցին սանդարամետքանդրնդոց:

Տեսեալ ըզլոյս մեծ հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

*Ասմունք. «Հոգեթով մրմունջ մը տեսլահար ձեռքով թոթովեց յանկարծ խոր գիշերուան մէջ. Ա.Բ.Գ.Դ.Ե.Զ.Է. - 36 անառիկ բերդեր բարձրացան յանկարծ երկնակամարին հայոց Թորգոմայ: Ժ.Ի.Լ.Խ.Ծ.Կ. ասեղնագործուած ինչպէս սուրբ նշխարհ Մեսրոպեան հանճարն արարեց հայ բանը. Ն.Շ.Ո.Չ.Պ.Ջ.: Արքայ Վռամշապուհ, Սահակ Կաթողիկոս բաշխուեցան վերջի ու դրութեան բարիք Տ.Ր.Ց.Ւ.Փ.Ք.»:*

*Այստեղ հայր Մեղրիկ, Սովետական շրջանին առաջին մրցանակի արժանացած Ալեքսանդր Յարութիւնեանի «Զօն Լենինին» երգչախմբային գլուխ գործոցը, բնագրային թեթեւ փոփոխութեամբ, a propos, գեղեկցօրէն կատարածէ որպէս «Զօն Մերոպ Մաշտոցի»:*

*Ասմունք. «Արշաւեցին փիղերն ահեղ դղրդոցով դէպ Տղմուտի ափ, դէպ հայկեան քաջերուն. գրա-*

*Շար.ը էջ 17*

# ԻՆԹԵՐՆԵԹԻ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԵՒ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԴԻԱՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԶՈՒԳԱՀԵՌ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ »ՅԻՄԱՐԱՆՈՒՄ Է«

*Գուտենբերգի կողմից տպագրութեան գիւտից յետոյ Եւրոպայում սկսեցին խօսել այն մասին, որ եթէ տպագրահաստոցի օգտագործումը չվերահսկուի, ապա Եւրոպայի ինտելեկտուալ կեանքը կը խափանուի:*

*Թուային տեխնոլոգիաների զարգացման շնորհիւ այժմ տեքստային, ձայնային եւ գրաֆիկական նիւթերի ստեղծումն ու տարածումն աւելի մատչելի է, հեշտ եւ գլոբալ: Միաժամանակ տարածուող նիւթի հսկայական զանգուածը ստեղծւում է այնպիսի մարդկանց կողմից, որոնք շատ քիչ բան գիտեն կամ համարեա ոչինչ գիտեն արհեստավարժ չափանիշների եւ գործընթացների մասին:*

*Միւս կողմից՝ սիրողական մակարդակի այդպիսի անձինք անմիջական նիւթի անվերջ հոսք են մատակարարում՝ ոչնչացնելով մշակութային նորմերի որակի եւ թոյլատրելիութեան սահմանները: Այս ամէնի հետեւանքով առաւել յաճախ են սկսում հնչել ապագայ ինտելեկտուալ քաոսի մասին կանխատեսումներ:*

*Սակայն իրականում այս կանխատեսումները եղել են մշտապէս: Մեդիաարտադրանքի օգտագործման ոլորտում իւրաքանչիւր նոր փոփոխութիւն՝ սկսած փափուկ կազմով գրքի թողարկումից մինչ YouTube տեսածառայութիւն, տագնապ է առաջացնում այն մարդկանց մօտ, որոնք սովոր են հին համակարգի սահմանափակումներին: Շատերը կարծում են, որ ժամանակակից մեդիառեսուրսների զարգացմանը զուգահեռ՝ երիտասարդութիւնը «յիմարանում է»:*

*Մինչդեռ այս վախը գոյութիւն ունի տպագիր մամուլի ստեղծումից ի վեր: Եւրոպայում Յովհան Գուտենբերգի տպագրութեան գիւտից յետոյ Աստուածաշունչն սկսեց թարգմանուել տարբեր լեզուներով: Հէնց այդ ժամանակ էլ ի յայտ եկան նոր աշխարհիկ ստեղծագործութիւններ՝ հիմնականում թարգմանաբար: Ժողովրդին հասկանալի լեզուով Աստուածաշնչի թարգմանուած տարբերակների հրատարակութիւնն էլ աշխարհիկ գրականութեան նոր ալիքի հետ մէկտեղ հանգեցրեց կրօնական բանավէճերի: Սկսեց խօսուել այն մասին, որ եթէ տպագրահաստոցի օգտագործումը չվերահսկուի, ապա Եւրոպայի ինտելեկտուալ կեանքը կը խափանուի:*

*Այս յայտարարութիւնները, միգուցէ, ճշմարիտ են: Գրքերի տպագրութիւնը նպաստեց Բողոքական շարժմանը, իսկ յետագայում ժամանակակից եւ զանգուածային գրականութեան հիման վրայ ձեւաւորուեցին նոր չափորոշիչներ: Վէպեր, թերթեր, գիտական ամսագրեր. այս ամէնը ստեղծուեց տպագրահաստոցի ի յայտ գալուց յետոյ: Ընդ որում՝ սա նպաստեց հասարակութեան ինտելեկտուալ բազայի եւ ձեռքբերումների ընդլայնմանը, ոչ թէ կրճատմանը:*

*Այսօր մենք նմանատիպ երեւոյթի եւ հրապարակման նոր հնարաւորութիւնների վկաներն ենք. թուային տեխնոլոգիաները մէկ ցանցում իրար են կապում միլիարդաւոր մարդկանց: Այդպիսի միաւորումը, իր հերթին, թոյլ է տալիս օգտագործել (կոգնիտիւ աւելցուկը)՝ տարեկան ազատ ժամանակի տրիլիոն ժամեր, որ կրթուած բնակչութիւնը ծախսում է իր հետաքրքրութիւնների եւ զբաղմունքների վրայ: Եթէ 20-րդ դարի մարդիկ իրենց ժամանակի զգալի մասն անցկացնում էին հեռուստացոյցի առջեւ, ապա այսօր մեր ազատ կոգնիտիւ ռեսուրսն այնքան հսկայական է, որ եթէ այդ ժամանակի մի փոքր մասը միայն օգտագործումից փոխարկենք նիւթի ստեղծման, ապա այն խոշոր ազդեցութիւն կ՛ունենայ:*

*Wikipedia-ի հիմքում, օրինակ, ընկած է գիտական հետազօտութիւնների ոլորտում peer review կոլեգիալ փորձագիտական գնահատականի սկզբունքը, որ կայքը կիրառել է գլոբալ փորմատով՝ կամաւորների մասնակցութեամբ: Իսկ PatientsLikeMe կայքում բժշկական հետազօտութիւնների նպատակով «Լու Գերիգ» հիւանդութեամբ տառապող գրանցուած հիւանդների թիւը բժշկական հետազօտութիւնների պատմութեան մէջ ամենամեծն է եղել: Հաւանաբար, այստեղ դեր է խաղացել այն հանգամանքը, որ շատերը հետաքրքրուած են բժշկութեան առաջընթացով:*

*Պարզ է, որ մարդկանց հետաքրքրող ամէն ինչ չէ, որ համապատասխանում է մարդկութեան բարձր նպատակներին: Մեդիառեսուրսի տարածմանը զուգահեռ՝ նիւթի միջին որակն արագօրէն ընկնում է: YouTube-ի ծիծաղաշարժ հոլովակները մարդիկ դիտում են շաբաթական 7 օր եւ օրական 24 ժամ, մինչդեռ ազատ կոգնիտիւ ռեսուրսի օգտակար օգտագործման դէպքերը դեռեւս սահմանափակ են:*

*Միշտ էլ այսպէս է եղել: Տպագրութեան մէջ էրոտիկ վէպերը 100 տարի առաջ են ընկել գիտական ամսագրերից: Գրքերի հսկայական քանակն առաւել բարդացնում է գիտելիքի*

*իւրաքանչիւր բնագաւառում անհրաժեշտ տեղեկատուութեան ստացումը:*

*Ընդ որում՝ թուային դեգրադացիայի մասին փաստարկները ստեղծւում են ենթադրութիւնների հիման վրայ: Այսինքն՝ այժմեան բոլոր մտավախութիւնների հիմքում ընկած է երեք համոզմունք. առաջին՝ անցեալն ինտելեկտուալ ձեռքբերումների անհասանելի եւ հրաշալի բարձունք է, երկրորդ՝ այժմ միայն յիմարութիւններն են տարածուած, եւ երրորդ՝ ներկայիս երիտասարդութիւնը չի կարող մշակութային*

*Շար.ը էջ 19*



# ՁԱՆԳԵՐ, ՂՕՂԱՆՋԷՔ, ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻՑ

*Շարունակուած էջ 15-էն*

*դաշտ Ցազկերտի հորդաներուն դիմաց, անվեհեր կանգնեցաւ հայ զինուորներն Քրիստոսաբար: Վարդան, իր բազում քաջերով զինուած, մարտնչումի վեհ ազդանշանը տուաւ. Վասն Ցիսուսի, վասն Հայրենեաց յառաջ»:*

*Աւարայրի ճակատամարտէն առաջ տեղի կ'ունենայ զինուորներուն երդման արարողութիւնը, ապա՝ պատերազմը:*

*Հայր սուրբին ճիշդ տեղին կատարած երաժշտական ընտրութիւնները ցոյց կու տան անոր ունեցած լայն ծանօթութիւնը հայ երաժշտական գրականութեան:*

*Այս առթիւ կը հրամցուին Վարդանանց ոգին պատկերող երկու երկեր՝ հայ զինուորներուն երդման երգն ու քաջն Վարդան Մամիկոնեանին նուիրուած «Իմ Հայրենեաց հոգի Վարդան» երգը: Այս երկու երկերուն միջեւ կայ բացատրական ասմունք մը եւս:*

*Առաջին երկը կրկին առնուած է Արմէն Տիգրանեանի «Դաւիթ Բէկ» օբերայի Գ. արարէն՝ այսպէս.*

«Երդուենք սրով ազատութեան,
Հատու զարկով միշտ յաղթական,
Տունը մաքրել հայրենական,
Օտար լծից ստրկական»:

*Ապա, Տիգրանեան ասոր շաղկապած է Ս. Ներսէս Շնորհալիի (12րդ դար) յօրինած հայրենասիրական, ազգասիրական եւ քրիստոսասիրական նկարագիրներով Վարդանանց զօրավարաց նուիրուած՝ «Նորահրաշ պսակաւոր եւ զօրագլուխք առաքինեաց, վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու» շարականը, զոր Տիգրանեան իր ճաշակին համաձայն նաեւ մշակած եւ զարգացուցած է:*

*Այս խմբերգին տպաւորիչ կատարումէն ետք կը լսուին երկու բանակներուն (հայ եւ պարսիկ) իրարու հետ ուժեղ բախումին, ահաւոր ընդհառումին եւ վայրագ կռիւներուն ահասաստ վայնասունը: (մարդկանց պոռչտուք, շղթաներու, վահաններու, սուրերու եւ նիզակներու կոփիւն ու շառաչ, ձիերու վրնջոց ու խրխնջոց, փիղերու գոչիւն ու գոռում, եւայլն):*

*Ասմունք. «Արիւն է դարձեալ: Աւեր ու աւար եւ չկար Վարդան: Զկային նաեւ 1036 կտրիճներն հայկեան: Սակայն, կար ու մնաց Հայաստան, մնաց Արարատն իր ալեհեր իմաստութեամբ: Եւ երկինքն հայոց մնաց անսասան իր հաւատքին մէջ Քրիստոսական»:*

*Երկրորդ երկը, Սիմոն Ֆէլէկեանի խօսքերով գրուած «Իմ հայրենեաց հոգի Վարդան» երգն է:*

*Կը յիշեմ, երբ ծննդավայրիս, Աղեքսարիոյ (Եգիպտոս) Մելգոնեան Մանկապարտէզը կը յաճախէի, բոլոր դասարաններուն ուսուցչուհիները, անխտիր, իրենց աշակերտներուն կը սորվեցնէին այս երգը, զոր մեծ հաճոյքով եւ ոգեւորութեամբ, կոկորդնիս պատռելու աստիճան պոռալով կ'երգէինք:*

*(Ահաւասիկ խօսուն օրինակ մը՝ թէ ինչպէս հայ դպրոցը փոքրիկներու մտքերուն եւ հոգիներուն մէջ հայրենասրութեան ու ազգասիրութեան ոգի կը սերմանէր:*

*«Իմ հայրենեաց...» երգը իր հարիւրամեայ ու աւելի հնութեամբ, շնորհիւ հայր սուրբին գեղագիտական (դաշնեակկակերտային եւ համեղանակային) ոճերով մշակումին, ինչպէս նաեւ շնորհալի ղեկվարութեանը, երգը հարստացած, առաւել գեղեցկացած, նոր հնչեղութիւն եւ շարժողութիւն ստացած, վերաթարմացած ու վերաշխուժացած, եթէ կ'ուզէք երիտասարդացած մեծապէս հաճելի եւ սիրելի երկի է վերածուած:*

*Ասմունք. «Դարեր եկան ու անցան, դարեր Հայաստան աշխարհի քարեղէն կամուրջներէն եկաւ Պարսիկը, եկաւ Մոնկոլը արիւնարբու եւ Սելջուկն եկաւ:*

*Նորէն սուգ, աւեր տարածուեցաւ դէպի արեւելք, դէպի հայու տուն, հայկական դաշտ ու լեռ: Աւերակուած Հայաստանէն խոյս տալով Լեւոն Իշխանն ու իր յետնորդները հասան նոր երկիր, որ դարձաւ հայոց մէկ նոր միջնաբերդ, մէկ նոր հայրենիք Հայաստանէն դուրս հայութեան համար»:*

*Չէ կարելի յաջորդ «Կիլիկիա) (Այգուն, այգուն)» երգը յօրինուած Ն. Վարդ. Դանիէլեանի կողմէ ԳՁ ձայնի (mode) մէջ, լսել կամ երգել առանց չզգացուելու եւ չյուզուելու:*

*Ստորեւ կը դնեմ, դժբախտաբար, այլեւս շատ քիչերուն ծանօթ այս հոյակապ երգին այնքան սրտառուչ խօսքերը.*

Այգուն այգուն իմ խըցկի մօտ,
Լուսաժպիտ մինչ առաւօտ,
Երգէ պլպուլն իմ Սուսանայ,
Կիլիկիա, Կիլիկիա, Կիլիկիա,
Կիլիկիա:

Գարուն կու գայ, ծաղկունք փթթին,
Դաշտերու մէջ, ի մէջ հովտին,
Բայց պլպուլիկն իմ դեռ ողբայ՝
Կիլիկիա, Կիլիկիա, Կիլիկիա,
Կիլիկիա:

Ախ այն վարդին կարմիր թերթեր,
Արեամբ նախնեաց են ներկուեր,
Եւ այն ցօղեր որ կը կաթին,
Արիւնն, արցունքն են Զապէլին:

Լուռ կաց, պլպուլ, ալ մի երգեր,
Մի նորոգեր մեր հին վիշտեր,
Լուռ կաց, քո տաղ վէրեր բանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկի՛, Կիլիկիա՛,
Կիլիկիա՛

*Բաղձանք, երազանք, ըղձանք, մորմոք եւ մղկտոց կայ այս երգին մէջ:*

*Հնամենի, համըընթաց եւ յուզաթաթաւ այս երգը, շնորհիւ հայ Բարիքեանի ստեղծագործական հնարագիտութեանց զարգացման եւ դաշնաւորման հակակիտական (contropuntal), նմանակումի (canon), ձայնառումի (drone) եւ ձայնամարզումի (vocalization) ոճերու գործածութեանց, վերածուած է ան արդիաշունչ հնգեակային (quintet) քնարական գեղեցկահիւս երկի մը:*

*Հայր սուրբը, առ հասարակ, տնային (strophic) ոճով յօրինուած երգերը մշակելու, ճոխացնելու, խորացնելու եւ գունաւորելու հաճելի եւ մատչելի մօտեցում մը ունի, որով երգատուները այլազան տեսակի բազմաձայնային ոճերով կը շարադրէ սկսելով պարզ ու թափանցիկ հիւսուածքով ու աստիճանաբար, տուն առ տուն, աւելի ու աւելի կը բարդացնէ եւ կը թանձրացնէ զայն:*

*«Այգուն, այգուն»ը հայր սուրբին այս երգերէն է:*

*Ասմունք. «Բարձրացաւ դարձեալ հայ թագաւորին կերպարը շքեղ իր թմբիրէն բազմադարեան եւ հիմը դրուեցաւ թագաւորութեան մը նոր, անունը՝ Կիլիկիա»:*

*Տիտանական այս աշխատանքին համար անհունօրէն շնորհաւորելի են Թորոնթահայ գաղութը, գնահատել գիտցած ըլլալու համար այսպիսի հոյակապ ծրագիր մը, բոլոր վարչական աշխատանքային յանձնախումբերը, բոլոր երգողները (միայնակ դերասանները, երէց եւ փոքր պարողները , բոլոր բեմահարթակի կազմերուն անդամ-անդամուհիները եւ վերջապէս կրկնապատիկ շնորհաւորանք տաղանդաւոր արուեստագէտ յօրինող, մշակող, նուագահար ու ղեկավար երաժիշտ Գերպ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին, որ հանդիսանալով առանցքը այս ծրագրին, աշխատանքի առիւծի բաժինը իր վրայ առնելով, նման երեւոյթ մը յաջողութեամբ գլուխ հանած է:*

*Կ'ուզեմ գրութիւնս վերջացնել 1911ին, Կոմիտաս վարդապետին Աղեքսանդրիոյ (Եգիպտոս) մէջ կազմած 150 հոգինոց երգչախումբով (հօրեղբայրս յաճախ մեծ հպարտութեամբ կը յիշէր իր ալ մասնակցած ըլլալը Կոմիտաս վարդապետին կազմած երգչախումբին), տուած համերգներուն (Աղեքսանդրիա եւ Գահիրէ) առթիւ գրուած դրուատական արտայայտութիւններէն Տիգրան Կամսարականի հետեւեալ տողերը, ուր խօսքը ուղղելով Կոմիտաս վարդապետին կ'ըսէ.*

*«Հայաստան ուխտագնացութեան տարիք զմեզ կամ լաւ եւս է ըսել քիչ մը Հայաստան բերիք Եգիպտոսի հայերուս. մենք կը կարծէինք թէ հայ կրօնաւորը, որ Էջմիածնէն կու գայ միւռոն միայն կը բերէ. դու Մասիսն ու Արագածը փոխադրեցիք հոս պահ մը. ո՞վ ըսաւ թէ լեռները չեն քալեր...*

*Մեզմէ ո՞վ պիտի կրնայ մոռնալ երբեք հայրենի այն տեսարանները, զոր խօսքով ու երգով հեռապարզեցիք մեր զմայլած աչքերուն առջեւ. վասնզի ձեր երգը, վարդապետ, ներդաշնակութիւն մըն է կատարեալ, գոյն ու պէսպիսութիւն ունի, խորութիւն եւ մթնոլորտ ունի. երկրի մթնոլորտը, լոյս ու ստուերներ ունի, Հայաստանը մեր լսելեօքը... տեսանք մենք»:*

*Այո, Մեղրիկ վարդապետ հովուական ապրտականութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռէն, Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ օրհնուած եւ մեզի հասած սրբալոյս միւռոն տարաւ Թորոնթահայ գաղութին. սակայն, տարաւ նաեւ այն, ինչ որ տարած էր Կոմիտաս վարդապետ Եգիպտոսի հայերուն:*

*Այս պարագային Տիգրան Կամսարականի դրուատական գրութենէն Եգիպտոս եւ Կոմիտաս վարդապետ անունները փոխարինելով Թորոնթօ եւ Մեղրիկ վարդապետ անուններով, որպէս իմ գնահատանքս եւս կը նուիրեմ զայն Գերպ. Տ. Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանին:*

*Աստուած օգնական ձեզ, սիրելի հայր սուրբ, տակաւ տատասկոտ, սական նաեւ վարդերով լի այս ճանապարհորդութեան ու ազգային առաքելութեան մէջ:*

*Սքանչելի գործ:*

*Բոլորիդ վարձքերը կատար:*

*Յ.Գ. Խտասալիկները ստանալու համար հաճեցէք դիմել (514) 332-3757 հեռախօսի թիւին եւ կամ գրել info@badanegan.ca*

# ԱԶԳՕՎԻ ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ

*Շարունակուած էջ 14-էն*

*է ապրում սփիւռքում:*

*Եթէ այսօր նման պատկերի ականատեսն ենք, ապա ի՞նչ սպասենք 50, 100 տարի անց- Իմ խորին համոզմամբ պարոն Աշոտեանի մտադրութիւնը մէկն է. հայի միջից արմատախիլ անել հայի ոգին, ինքնութեան գիտակցումը, այն, ինչը հային հայ է պահում: Երկար տարիներ գտնուելով սփիւռքում, առերեսուելով հայի ուծացման փաստի հետ, սրտիս խորին մի անկիւնում յոյսեր էի փայփայում, որ կայ Հայաստան աշխարհ, որտեղ հայ երեխան հայ է մեծանում իր մտածողութեամբ, հայրենասիրութեամբ, հայերէնի գերազանց իմացութեամբ, որ գոնէ նրանց ուծացման վտանգը չի սպառնում:*

*Բայց այսօր այդ վտանգը եկել մեր դուռն է չոքել: Մենք՝ հայերս տառապում ենք օտարամոլութեան սինդրոմով, միշտ ուրիշից օրինակ վերցնելու սովորոյթով, թէկուզ ինչքան էլ վատը լինի օտարինը, մենք մեր լաւը օտարից ստորադասում ենք: Այսօր այդ օտարամոլութիւնը պարզ երեւում է նոր նկարահանուող Հայկական սերիալներում, որտեղ գործող անձերից ոմանք պարտադիր պէտք է խօսեն ռուսերէն. ցուցամոլութիւն որակել, թէ՞ գլուխ չեմ հանում. այն դէպքում, երբ հազարաւոր սփիւռքահայերի անմատչելի է ռուսերէնը: Չեմ մոռանում, երբ սովետների ժամանակ շատ ծնողներ իրենց երեխաներին ռուսական կրթութիւն ստանալու համար ամէն միջոցի դիմում էին, մինչեւ անգամ կաշառքի, որ իրենց երեխան ռուսական կրթութիւն ստանայ: Էլ չեմ ասում մոդայիկ էր դարձել ռուսերէնի իմացութիւնը ցուցադրել ամենուրեք:*

*Թող թիւր կարծիք չստեղծուի, թէ ես դէմ եմ, որ հայ երեխան տիրապետի օտար լեզուների, քաւ լիցի, թող 10-ը լեզու իմանայ, բայց ոչ մեր մայրենի լեզուն ոտնատակ անելու հաշուին:*

*Ի՞նչ է, հնարաւոր չէ այսօր հանրակրթական դպրոցներում հայերէնին զուգահեռ օտար լեզուի իմացութեան պատշաճ մակարդակ ապահովել, որակեալ, լաւ մասնագէտների օգնութեամբ, իհարկէ անլուծելի ոչինչ չկայ, միայն նուիրուածութիւն, հետեւողականութիւն ու ցանկութիւն լինի: Աշոտեանի թեթեւամիտ այս քայլը նման է, երբ մարդը փորձում է փոքրիկ խրճիթ կառուցել, տապալում է հազարաւոր արհաւիրքների դիմակայած դարաւոր հզօր ամրոցը:*

*Հանրապետական կուսակցութիւնը սկսած նախագահից, վերջացրած ազգային ժողովում աթոռներ գրաւած, մանդատների տիրացած բիզնեսմեններով , ապազգային դրսեւորումներով խայտառակեցին իրենք իրենց. Քաջնազարների հաւաքածու է այդ կուսակցութիւնը, որոնք շահից ու փողից այն կողմ ոչինչ չեն տեսնում. Ի՞նչ հայրենիք, հայրենասիրութիւն, ինչ հայապահպանութիւն... միայն կաղին ունենան, ուտեն, պառկեն գիրանան... - Այստեղ տեղին է ասուած. Երբ գողը տանից է լինում, հորթը երդիկից են հանում... համեմատութիւնս կոպիտ է, բայց ցաւոք այս է դառն իրականութիւնը:*

# «ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆԸ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԿՐՈՒՄ ԵՆ ԱՏՐՊԷՅՃԱՆՑԻ ԵՒ ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ»

*Շարունակուած էջ 1-էն*

*յի եւ ԱՄՆ-ի նախագահներ Տմիտրի Մեդվեդեւի, Նիքոլա Սարքոզիի եւ Պարաք Օպամայի ձեւակերպած եւ Յունիսի 26-ին Մասկոկում վերահաստատած տարրերը պէտք է հակամարտութեան ցանկացած արդար եւ երկարատեւ կարգաւորման հիմքը լինեն:*

*Առաջարկուող տարրերը իրենցից ներկայացնում են մէկ ամբողջութիւն, եւ դրանցից մի քանի տարրեր առանձնացնելու ցանկացած փորձ անհնարին կը դարձնի հաւասարակշռուած լուծման հասնելը:*

*Ֆրանսայի արտգործնախարար Պեռնար Քուշներն ու ԱՄՆ փոխպետքարտուղար Ճէյմս Ստեյնբերգը երախտագիտութիւն են յայտնել Ռուսաստանի նախագահ Տմիտրի Մեդվեդեւի եւ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովին՝ կողմերի միջ-տարաձայնութիւնները յաղթահարելու համար ներդրած ջանքերի առնչութեամբ, հաշուի առնելով այս տարուայ Յունուարի 25-ին Սոչիի եւ Յունիսի 17-ին Սանկտ Պետերբուրգում հանդիպմանը քննարկուած իրավիճակը:*

*Նախարարներն ընդգծել են, որ մինչեւ օրս հակամարտութեան կողմերի ձեռնարկած ջանքերը բաւարար չեն եղել առկայ տարաձայնութիւնները յաղթահարելու համար: Նրանք ափսոսանք են յայտնել տարածաշրջանում լարուածութիւնը մեծացնող վերջերս տեղի ունեցած իրադարձութիւնների կապակցութեամբ, այդ թւում 2010թ. Յունիսի 18-19-ի զինուած լուրջ միջադէպի եւ իրավիճակն աւելի թեժացնող հրապարակային յայտարարութիւնների առնչութեամբ:*

*Նրանք զգուշացրել են, որ ուժի գործադրումն է ստեղծել ներկայ իրավիճակը, եւ դրա կրկնութիւնը կարող է հանգեցնել միայն տառապանքների, կործանման եւ հակամարտութեան ու թշնամանքի սերնդէ սերունդ փոխանցման:*

*Նրանք կոչ են արել փոխզիջման ոգու ամրապնդման՝ բանակցութիւնները շարունակելու համար անհրաժեշտ ընդհանուր հիմքի վրայ համաձայնութեան հասնելու նպատակով: Կողմերը լրացուցիչ գործողութիւններ պէտք է ձեռնարկեն 1994թ. հրադադարն ամրապնդելու եւ յետագայ քաղաքական երկխօսութեան եւ համաձայնութիւնների հասնելու համար աւելի բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով: Համանախագահող երկրների պատուիրակութիւնների ղեկավարները հաստատել են իրենց աջակցութիւնը՝ կողմերին խաղաղ ճանապարհով համաձայնութեան հասնելու համար, սակայն նշել են, որ ղարաբաղեան հակամարտութեանը վերջ տալու գլխաւոր պատասխանատւութիւնը կրում են ատրպէյճանցու եւ հայ առաջնորդները:*

## ՄԱՄԵԴՅԱՐՈՎ ԴԺԳՈՀ

*Ալմաթիում՝ Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանի հետ հանդիպումից յետոյ Ատրպէյճանի արտգործնախարարը կրկին մեղադրել է պաշտօնական Երեւանին՝ բանակցութիւնները ձգձգելու եւ հակամարտութեան կարգաւորմանը խոչընդոտելու մէջ:*

*«Ինձ մօտ այնպիսի կարծիք է ձեւաւորուել, ասես Հայաստանը չի ուզում առաջընթաց արձանագրել բանակցային գործընթացում», - ատրպէյճանական APA գործակալութեան հաղորդմամբ, հանդիպումից յետոյ յայտարարել է Մամեդիարովը եւ մանրամասնել. - «Հայկական կողմը առաջ է քաշում այնպիսի հարցեր, ինչպիսին է օրինակ Ղարաբաղի կարգավիճակը, թէեւ այս փուլում անհնար է աշխատել այդ հարցի լուծման վրայ»:*

*«Նախ եւ առաջ անհրաժեշտ է կարգաւորել ամենադժուար հարցը՝ գրաւեալ տարածքների ազատագրումը, ինչը հնարաւորութիւն կը տայ երկու ժողովուրդների միջեւ ինչ որ կապեր ու շփումներ հաստատել», - յայտարարել է Մամեդիարովը՝ ընդգծելով, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդները եւս առաջարկում են հակամարտութիւնը կարգաւորել փուլային տարբերակով:*

*Մամեդիարովը եւս մէկ անգամ նշել է՝ հինգ շրջանները ետ ստանալու դէպքում Ատրպէյճանը պատրաստ է բացել հաղորդակցութեան բոլոր միջոցները. «Այս անգամ չյաջողուեց այս հարցի շուրջ համաձայնութեան գալ, սակայն, պէտք է համբերատար լինել եւ շարունակել աշխատանքը», - ասել է Ատրպէյճանի արտգործնախարարը:*

*Վերջինիս խօսքով, Ալմաթիում տեղի ունեցած բանակցութիւններում քննարկուել է նաեւ Հայաստանի, Ատրպէյճանի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբում համանախագահող երկրների կողմից համատեղ յայտարարութիւն ընդունելու հարցը. «Ու թէեւ միջնորդները մեծ ջանքեր գործադրեցին այդ ուղղութեամբ, ցաւօք, Հայաստանի արտգործնախարարութիւնը անհամաձայնութիւն յայտնեց որոշ հարցերի շուրջ եւ հնարաւորութիւն չտուեց հինգ երկրների կողմից համատեղ յայտարարութիւն ընդունել», - յայտարարել է Մամեդիարովը:*

*Ատրպէյճանի արտգործախարարը նաեւ նշել է, որ համանախագահները մտադիր են մինչեւ Սեպտեմբեր եւս մէկ անգամ այցելել տարածաշրջան. յստակ ժամկէտները, սակայն, դեռեւս յայտնի չեն:*

## ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է

*Էդուարդ Նալբանդեանը դրականօրէն է արձագանգել Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարների հետ հնգակողմ հանդիպումից յետոյ ԵԱՀԿ-ում Ռուսաստանի, Ֆրանսայի եւ ԱՄՆ-ի պատուիրակութիւնների ղեկավարների տարածած յայտարարութեանը:*

*«Հնգակողմ հանդիպումը օգտակար հանդիպում էր, չնայած հնարաւորութիւն չեղաւ հնգակողմ յայտարարութիւն անել, ի հարկէ, Ատրպէյճանի՝ ատրպէյճանական կողմի ապակառուցողական, ինչպէս միշտ, դիրքորոշման պատճառով», - Երկուշաբթի օրը արտգործնախարարութեան տարածած գրաւոր մեկնաբանութիւնում ասել է Էդուարդ Նալբանդեանը՝ անդրադառնալով ԵԱՀԿ-ի արտգործնախարարների ոչ պաշտօնական գագաթնաժողովի շրջանակներում կայացած հանդիպմանը:*

*Էդուարդ Նալբանդեանի մեկնաբանութեամբ, յայտարարութիւնում կարեւոր է այն հանգամանքը, որ յղում է կատարւում երեք սկզբունքներին, որոնց հիման վրայ պէտք է կարգաւորուի հիմնախնդիրը, ինչպէս նաեւ յղում է կատարւում Ակվիլայում անցեալ տարի եւ այս տարի Մոսկուայում նախագահներ Մեդվեդեւի, Օպամայի եւ Սարքոզիի կողմից արուած յայտարարութիւններին եւ դրանց մէջ պարունակուող դրոյթներին, եւ ասւում է, որ հենց դրանց հիման վրայ պէտք է կարգաւորուի հիմնախնդիրը:*

*«Կարեւոր է, որ նշւում է, որ այս սկզբունքների, այս դրոյթների միջեւ չի կարելի գերակայութիւն կատարել, չի կարելի ընտրովի մօտենալ այս սկզբունքներին եւ դրոյթներին», - իր մեկնաբանութիւնում ասել է Էդուարդ Նալբանդեանը՝ ընդգծելով. - «Եթէ Ատրպէյճանը այս երեք սկզբունքներից կենտրոնանում է միայն մէկի՝ տարածքային ամբողջականութեան վրայ, ապա իրականում խօսքը գնում է երեք սկզբունքների մասին: Եռանախագահող երկրները շատ պարզ եւ բաց ձեւով ասացին, որ սա ապակառուցողական մօտեցում է. չի կարելի խտրականութիւն դնել այս սկզբունքների եւ դրոյթների միջեւ»:*

*Հայաստանի արտգործնախարարը կարեւորել է նաեւ եռանախագահող երկրների յայտարարութեան այն կէտը, որով շեշտւում է հրադադարի ամրապնդմանն ուղղուած քայլեր կատարելու անհրաժեշտութիւնը:*

*«Այս յայտարարութեան մէջ նաեւ նշւում է Յունիսի 18-ին ատրպէյճանցիների կողմից կազմակերպուած սադրանքի մասին եւ նաեւ այլ գործողութիւնների, այլ քայլերի, որոնք արւում են Ատրպէյճանի կողմից», - նշել է Նալբանդեանը:*

*«Կարծեմ՝ այստեղ բոլորի համար ակնյայտ է՝ ում մասին է խօսքը, որովհետեւ խօսւում է հրահրիչ յայտարարութիւնների մասին, որոնք սրում են իրավիճակը, եւ որոնք չեն նպաստում հիմնախնդրի կարգաւորմանը», - իր գրաւոր մեկնաբանութիւնում եզրակացրել է Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդեանը:*

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿՏՈՒԺԻ, ԵԹԷ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵԿՆԱԾ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՁԵՌՔԸ ՉՍԵՂՄԻ

*Շարունակուած էջ 1-էն*

*կարգաւորման գործընթացը Ղարաբաղի խնդրի լուծման վրայ դրական ազդեցութիւն կ'ունենայ, շարունակել է. «Զնայած տարածաշրջանում խաղաղութեան հաստատման ուղղութեամբ նկատուող դժուարութիւններին, Թուրքիան օժտուած է բաւարար քաղաքական կամքով՝ շարունակել խաղաղութեան հաստատմանն ուղղուած քայլերը: Եթէ Հայաստանն էլ ցոյց տայ նոյն քաղաքական կամքը, գործընթացը ամբողջ տարածաշրջանի համար դրական առաջընթաց կունենայ»,-նշել է Դաւութօղլուն՝ ամփոփելով, որ եթէ Հայաստանը չսեղմի Թուրքիայի մեկնած բարեկամական ձեռքը, ամէնից շատ կը տուժի:*

# ՍԷՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆԸ ՀԱՆԴԷՍ Է ԵԿԵԼ

*Շարունակուած էջ 1-էն*

*Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթաքիի հետ հանդիպումից յետոյ տուած համատեղ ասուլիսում Հայաստանի պաշտպանութեան նախարարը կարեւորել է երկկողմանի յարաբերութիւնների խորացման անհրաժեշտութիւնը՝ ասելով, որ տարածաշրջանում ծագող ճգնաժամերը կարելի է յաղթահարել միայն կառուցողական երկկողմ եւ բազմակողմ համագործակցութեան միջոցով:*

*Իր հերթին Իրանի արտգործնախարարը ընդգծել է, որ պէտք է ստեղծել «միջ-տարածաշրջանային մեխանիզմ», որ կ'օգնի յաղթահարել տարածաշրջանային ճգնաժամերը:*

*Իրանի պաշտպանութեան նախարար Ահմադ Վահիդին, ով նոյնպէս հանդիպել է Սէյրան Օհանեանի հետ, ասել է, որ ահաբեկչութիւնը, կազմակերպուած յանցաւորութիւնը, թմրանիւթերի անօրինական շրջանառութիւնը եւ տարածաշրջանից դուրս գտնուող ուժերի ներխուժման վտանգները այն հիմնական խնդիրներն են, որոնք սպառնում են տարածաշրջանի անվտանգութեանը եւ համագործակցութեան կոչ է արել՝ ճգնաժամերի յաղթահարման ուղղութեամբ:*

# ՀԱՅՐ ԱՆՏՈՆ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*բարեմասնութիւնները եւ տարած ճիգերը թէ իր ծուխի տնտեսական եւ ընկերային իրավիճակի բարելաւման եւ թէ մեր համայնքի միասնութեան ամրապնդման տեսակէտէն՝ որպէս աշխատունակ եւ իր առաքելութեան գիտակից եկեղեցական մը:*

*Շուրջ մէկ ու կէս ժամ տեւող սոյն հանդիպման ընթացքին խօսակցութեան նիւթ դարձան նաեւ Հայ Կաթողիկէ համայնքի, Մխիթարեան միաբանութեան եւ յարակից կառոյցներու իրավիճակը, որոնց մասին տուաւ շահեկան տեղեկութիւններ: Նաեւ, Հայր Անտոն Սարոյեան անդրադարձաւ իր յառաջիկայ ուղեւորութեան մասին: Ան յայտնեց թէ դէպի Զմմառու միաբանութիւն իր վերադարձի ճամբուն վրայ պիտի այցելէ Վատիկան եւօրեայ այցելութեամբ: Ապա պիտի հանդիպի Դամասկոս, ուր պիտի նշուի իր քահանայական օծման 25 ամեակը:*

*Բարի ճանապարհ Հայր Անտոն Սարոյեանին եւ նորանոր յաջողութիւններ իր յառաջիկայ առաքելութեան:*

**ՄԱՍԻՍ**
**ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ**

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



*Հանգուցեալ **ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ** մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Յուլիս 25, 2010-ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ,* 2215 E Colorado Blvd, Pasadena, *յաւարտ Ս. Պատարագի:*

*Սգակիրներն են*

*Զաւակները՝*

*Տէր եւ Տիկին Յովհաննէս(Ժան) եւ Սիլվանա Խոտանեան եւ զաւակունք*

*Տէր եւ Տիկին Պետրոս եւ Լենա Խոտանեան եւ զաւակունք*

*Տէր Եւ Տիկին Գրիգոր եւ Քաթիա Խոտանեան եւ զաւակունք*

*Տէր եւ Տիկին Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը*

*Քոյրերը՝*

*Այրի Տիկ. Ազնիւ Տէր-Ղուկասեան եւ զաւակունք*

*Տէր եւ Տիկին Սարգիս եւ Օժէն Զուլճեան եւ զաւակունք*

*Նաեւ՝*

*Տատեան, Կարապետեան, Քիւրքչեան, Քրմոյեան եւ Գուզուեան ընտանիքները:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

*Մեր մօր **ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ** մահուան տխուր առիթով շնորհակալութիւն կը յայտնենք բոլոր անոնց որոնք մասնակից եղան մեր սուգին, այցելութեամբ, հեռաձայներով, ծաղկեպսակով կամ փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:*

*Ի մասնաւորի շնորհակալութիւն կը յայտնենք Վաչէ Արք. Յովսէփեանին, Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութեան, Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնին, Ս.Դ.Հ.Կ. «Արսէն Կիտուր» Մասնաճիւղին, Ս.Դ.Հ.Կ. «Ժիրայր-Մուրատ» Մասնաճիւղին, Նոր Սերունդ Մշակութային Միութեան Վարչութեան եւ «Մասիս» Շաբաթաթերթի խմբագրութեան:*

***ԽՈՏԱՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ***

## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

*Հանգուցեալ **ԼՈՒՍԻՆ ԽՈՏԱՆԵԱՆԻ** մահուան տխուր առիթով փոխան ծաղկեպսակի Նոր Սերունդ Մշակութային Միութեան ֆոնտին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները, որուն համար ՆՍՄՄ-ի վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ:*

| | |
|---|---|
| *Տէր եւ Տիկ. Սեդրակ Աճէմեան* | $300 |
| *Տէր եւ Տիկ. Խաչիկ Քէշիշեան* | $200 |
| *Տէր եւ Տիկ. Տիրան Ճէրէճեան* | $200 |
| *Տէր եւ Տիկ. Յարութ Զուլճեան* | $200 |
| *Տէր եւ Տիկ. Սիմոն Սիմիդեան* | $150 |
| *Տէր եւ Տիկ. Սահակ Քըթֆեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ Յարութ Պոյամեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Ոսկեբերան Ղազարեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Փիթր Տարագճեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Վարանդ Մելքոնեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Գրիգոր Արսլանեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Ճան Վարդանեան* | $100 |
| *Տիկ. Ալիս Յարութիւնեան եւ ընտանիք* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Կարօ Մսրլեան* | $100 |
| *Տիար Յովհաննէս Պալայեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Կարօ Պէքարեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Վիգէն Կիւլվարդեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Տիգրան Սարգունի* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Հէրի Վարդանեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Յարութ Տէր Դաւիթեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Պօղոս Մարգարեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Թադէոս Քէօրողլեան* | $100 |
| *Տիար Մայքլ Նահապետ/Yearbook Inc.* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Մանուկ Մանուկեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Կիւրեղ Մանկրեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Միհրան Խաչատուրեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Թովմաս Եթարեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Վարդան Քէօրողլեան* | $100 |
| *Տիար Սուրէն Խուտանեան* | $100 |
| *Տէր եւ Տիկ. Գաբրիէլ Մոլոյեան* | $50 |
| *Տէր եւ Տիկ. Աւետիս Պօղոսեան* | $50 |
| *Տիար Յովհաննէս Ճիվալակեան* | $50 |
| *Տիկ. Սոնիա Կարապետեան* | $50 |
| *Տէր եւ Տիկ. Յակոբ Գուզուեան* | $50 |
| *Տէր եւ Տիկ. Մարտիրոս Մուրատեան* | $50 |
| *Տէր եւ Տիկ. Գէորգ Անթապլեան* | $50 |

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*Ցաւով իմացանք մահը Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երիցագոյն անդամներէն՝ Գերշ. Տ. Սմբատ Արք. Լափաճեանի, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 17 Յուլիս, 2010, Միշըն Հիլզի Արարատ Տան մէջ: Հանգուցեալը աւելի քան երեք տասնեակ տարիներէ ի վեր կը բնակէր Մոնթեպելլոյի մէջ: Վերջին տարիներուն իր յառաջացած տարիքին եւ հիւանդութեան պատճառով հաստատուած էր Արարատ տարեցներուն տունը:*

*Մեր վշտակցութիւնները վախճանեալ սրբազանի միաբանակից եղբայրներուն:*

## ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՄԵԼԳՈՆ ՍԷՖԷՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Անդրանիկ, Ժիրայր եւ Մելգոն Քէշիշեան եղբայրները իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն համայն Սէֆէրեան ընտանիքին եւ առ այդ փոխան ծաղկեպսակի $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:*

## ԻՆԹԵՐՆԵԹԻ ՕԳՈՒՏՆԵՐԻ ԵՒ ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Շարունակուած էջ 16-էն*

*նորմեր ձեւաւորել, որոնք կը լուծեն ինտերնետի աւելցուկի խնդիրներն այնպէս, ինչպէս 17-րդ դարի մտաւորականները կարգաւորեցին տպագիր մշակոյթի խնդիրները:*

*Միւս կողմից՝ զուգահեռ հիմքեր կան նաեւ ենթադրելու, որ ինտերնետը կը նպաստի 21-րդ դարի հասարակութեան ինտելեկտուալ զարգացմանը:*

*Իրականում անցեալն այնքան էլ փայլուն չէ, իսկ ներկան այնքան էլ սարսափելի չէ, ինչպէս կարծում են յոռետեսները: Մեր սերնդակիցների «բախտը չի բերել» պատմական հեռանկարում, քանի որ մենք ապրում ենք նոր հնարաւորութիւնների զանգուածային տարածման ժամանակաշրջանում, որովհետեւ ռեսուրսների աւելցուկն աւելի կործանարար է, քան դրանց պակասը: Այժմ մենք ականատեսն ենք հին ինստիտուտների վրայ աճող ճնշմանը: Եւ այնպէս, ինչպէս պարտադիր ուսուցումն է դարձել տպագրութեան զարգացման պատասխանը, այնպէս էլ ինտերնետի օգտագործումն է իր հետ բերել ոչ միայն նոր տեխնոլոգիաների, այլեւ*

*մշակութային նոր հաստատութիւնների ստեղծման անհրաժեշտութիւն:*

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**
**CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ**
**(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)**
**GLOABCAST SATELLITE**
**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00**

**ՔԱՋ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

**Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30**
**Կլէնտէյլի 380-րդ կայանից**

**INVITATION FOR BIDS**
**(IFB 7789)**
**FIDELITY INSURANCE FOR LA LOMOD**

**LA LOMOD invites from qualified insurance carriers, brokers and agents to provide Fidelity Insurance for LA LOMOD, the Performance-Based Contract Administrator (PBCA) of project-based Section 8 contracts in Southern California. Copies of the IFB may be obtained by contacting Connie Loyola at (213) 413-2368 or by e-mail connie.loyola@hacla.org. The IFB may also be downloaded at www.hacla.org/ps. Bids will be accepted until 2:00pm, August 4, 2010.**

7/22, 7/29/10
CNS-1901859#
MASSIS WEEKLY

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏ
## ՍԻՒԶԻ ԿԵՆՏԻԿԵԱՆԻ ՄՐՑԱՄԱՐՏՆ ԸՆԴՀԱՏՈՒԵՑ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՈՉ-ՈՔԻ





*Գերմանիան ներկայացնող Սիւզի Կենտիկեանը Մեքսիքայի ներկայացուցիչ Արելի Մուչինոյի հետ մրցամարտում կարողացաւ պահպանել WIBF/WBA/WBO-ի վարկածներով ախոյեանական գօտիները: Մրցամարտի 3-րդ ռաունդի սկզբնամասում մարզուհիները յանկարծակի ընդհարուեցին գլուխներով եւ Կենտիկեանը պատռուածք է ստացել, ինչի պատճառով հանդիպումը դադարեցուեց: Գրանցուեց տեխնիկական ոչ-ոքի, ինչը նշանակում է, որ Սիւզին շարունակելու է կրել ախոյեանական տիտղոսները:*

*Գերմանիայի Շուերին քաղաքի «Ցունիվերսիում» մարզադահլիճ եկած 3500 հանդիսականները խորը հիասթափութիւն ապրեցին նման կարճ աւարտից: Մինչեւ մրցամարտի ընդհատումը, Կենտիկեանն աւելի լաւ էր գրոհում եւ առաւելութիւն ունէր մրցակցի նկատմամբ:*

*«Ես ցաւում եմ հանդիսատեսի համար: Ես նոր-նոր էի մտել պայքարի մէջ, բայց այն արդէն աւարտուեց»,- մրցամարտից յետոյ ասել է Կենտիկեանը:*

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկանաք զանոնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**
**Norserount@sbcglobal.net**

## ԼԻՈՎԱ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼ Է ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԸ



*Առաջին թեթեւագոյն քաշային կարգում Եւրոպայի ախոյեան, գիւմրեցի բռնցքամարտիկ Լիովա Կիրակոսեանը հերթական անգամ յաջողութեամբ պաշտպանեց ախոյեանական իր տիտղոսը: Ֆրանսայի Թուլոն քաղաքում կայացած մենամարտում 59 կգ քաշային հայ բռնցքամարտիկը 2-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց ախոյեանի կոչման յաւակնորդ, սպանացի Ֆրանսիսկո Ցոհալեսին:*

*34-ամեայ Ցոհալեսը կրեց իր 6-րդ պարտութիւնը: Նա իր անցկացրած 33 մարտերից յաղթել է 27-ում:*

*Իսկ փորձառու Կիրակոսեանի համար սա 38-րդ մրցամարտն էր պրոֆեսիոնալ ռինգում: 36-ամեայ Կիրակոսեանը յաղթել է 33-ում, 23-ը՝ նոկաուտով, կրել է ընդամէնը 5 պարտութիւն: Եւրոպայի ախոյեանի կոչումը հայազգի բռնցքամարտիկը նուաճել է այս տարուայ փետրուարին՝ 3-րդ ռաունդում պարտութեան մատնելով անգլիացի Սկոտ Լոտոնին, ընդ որում, մրցամարտը կայացաւ անգլիացու հայրենիքում: Կիրակոսեանը նախկինում էլ այդ քաշայինում Եւրոպայի ախոյեանն էր, սակայն 2007-ին կորցրեց այն՝ պարտուելով բելառուս Գուլիակեւիչին: Կիրակոսեանն ունի Ռուսաստանի քաղաքացիութիւն եւ այժմ բնակւում է Ֆրանսայում:*

## ԱԲՐԱՀԱՄԻ ԵՒ ՖՐՈՉԻ ՄՐՑԱՄԱՐՏԻ ՕՐԸ ՅԱՅՏՆԻ Է

*Երկարատեւ անորոշութիւնից յետոյ վերջապէս յստակեցուեց Արթուր Աբրահամի եւ Կառլ Ֆրոչի մրցամարտի անցկացման վայրն ու ժամկէտը: Այն կը կայանայ Հոկտեմբերի 2-ին Մոնաքոյում: Մրցամարտը կը կայանայ* Super Six World Boxing Classic*-ի մրցաշարի շրջանակում: «Անհամբերութեամբ եմ սպասում ռինգ վերադարձի», - խոստովանել է Աբրահամը, «ուրախ եմ, որ արդէն որոշուել է մրցամարտի վայրն ու ժամկէտը: Դիրելի հետ մրցամարտում իմ որակազրկումը դեռ տանջում է ինձ: Ֆրոչի նկատմամբ յաղթանակը միայն ինձ կը հանգստացնի:*

*Ես դիտել եմ Կառլի մարտը Կեսլերի հետ, եւ երկու բռնցքամարտիկներն էլ ինձ դուր են եկել: Ֆրոչը շատ լաւ բռնցքամարտիկ է, այնպիսին, ինչպիսին ես եմ: Սա կը լինի իմ մարզական կարիերայի գլխաւոր մարտը»:*

*Կառլ Ֆրոչը յայտարարել է, որ ինքը երկար ժամանակ է, ինչ նախապատրաստւում է Աբրահամի հետ մարտին. «Ես յարգում եմ Արթուր Աբրահամին, սակայն պատրաստ եմ յառաջիկայ մարտում խլել նրա թագը»:*

